


## ՍՈՒՐԻՎ ԵՒ ԶՈՒՂԱ ԴԻԽՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐԵՅԻՆ

Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատի եւ Դամասկոսի մէջ Հարաւային Ամերիկայի դիւանագիտական պատուիրակութիւններու նախագահներու եւ դեսպաններու ներկայութեան, Սուրիոյ ԱԳ Նախարարութեան դիւանագիտական հիմնարկի տնօրէն դոկտ. Իմատ Մուսթաֆա եւ Դամասկոսի մէջ Զուպայի դեսպան Լուիս Մարիանօ Ռոտրիկէզ, փոխան Զուպայի ԱԳ Նախարարութեան միջազգային յարաբերութեան բարձրագոյն հիմնարկին, ստորագրեցին երկու հիմնարկներուն գործակցութեան համաձայնագիր:



Այս առիթով, Սուրիոյ ԱԳ Նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ իր արտասանած խօսքին մէջ շեշտեց Սուրիոյ եւ Զուպայի պատմական յարաբերութիւնները: Ան կարեւոր եւ արդիւնաւետ գործակցութեան արդիւնք համարեց այս համաձայնագիրը:

Իր կարգին Զուպայի դեսպանը ներկայացուց երկու երկիրներու յարաբերութիւններու զարգացման ընթացքը, անդրադառնալով միջազգային հարթակներու վրայ իրար գօրավիզ կանգնելու երկու երկիրներու դրական մօտեցումին:

## ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՂԱՏԱՊԱՐՏԵ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՐԱԽՅԻՆ ՇՐՋԱՆԻՆ ՄԵՋ «ՄԱՅԱՏԻՆ»-Ի ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՎՐԱՅ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ

Լրագրողներու Միութիւնը խստիւ դատապարտեց Իսրայէլի իրագործած ոճիրը Լիբանանի հարաւային շրջանին մէջ գտնուող «Մայատին» պատկերասփիւռի կայանի անձնակազմին նկատմամբ, որուն հետեւանքով լրագրող Ֆարահ Օմար եւ լուսանկարիչ Ռապի Մամարի նահատակուեցան:



Միութիւնը յայտնեց, որ այս արարքը լուսարձակի տակ կ'առնէ Իսրայէլի անմարդկային քաղաքականութիւնը եւ շարունակական յարձակումները լրագրողներուն վրայ, որպէսզի խափանուի ճշմարտութեան ձայնը, որ կը վաւերագրէ Իսրայէլի ոճիրները Պաղեստինի ժողովուրդին նկատմամբ:

Միութիւնը այս քայլը պատերազմական ոճիր համարեց, համաձայն ժընեւի 4-րդ համաձայնութեան եւ միջազգային օրէնքին, ապա կոչ ուղղեց միջազգային ընտանիքին եւ ՄԱԿ-ի հաստատութիւններուն պատասխանատուութիւն կրելու լրագրողներու դէմ իսրայէլեան իրարայաջորդ յարձակումներուն եւ անմարդկային ոճիրներուն համար, շեշտելով իր ամբողջական գօրակցութիւնը՝ «Մայատին»-ի առաքելութեան:

## ՓԱՓԱՅԵԱՆ «ԿԸ ԴԻՄԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱՂԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ՝ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԲԵԿԱՆԵԼՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ»

ՀՀԴ Բիւրոյի անդամ, Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի համանախագահ Մուրատ Փափագեան դիմած է Հայաստանի արդարադատութեան համակարգին, որպէսզի վերջինս ստանձնէ իր պարտականութիւններն ու բեկանէ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան իրեն վերաբերող որոշումը:

Իր տարածած յայտարարութեան մէջ ան շեշտած է. «Կը դիմեմ Հայաստանի արդարադատութեան համակարգին՝ ստանձնելու իր պարտականութիւնները, բեկանելով Ազգային Անվտանգութեան Ծառայութեան 14 Յուլի 2022-ի որոշումը: Երբեք չեմ մտնի Հայաստան, Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (այսուհետեւ՝ ԱԱԾ-«Գ.») արգիլեց իմ մուտքը եւ արտաքսման հրաման տուաւ՝ ըսելով, որ ես «փրոստնա Նոն կրթաթա եմ»: Դեպքերէն 13 ամիս անց՝ 21 Օգոստոս 2023-ին, Նախնական դատական նիստի ընթացքին, դատաւորը ԱԱԾ-էն պահանջեց ներկայացնել իմ Հայաստան մուտքի արգելքին պատճառները:



Իրադարձութիւններէն 13 ամիս անց, անոնք չկրցան նուազագոյն պատճառներ ներկայացնել ...

Դատաւորը 14 օր ժամանակ տուած էր Անվտանգութեան Ծառայութեան ներկայացնելու իմ հեռացման պատճառները, այսինքն՝ 4 Սեպտեմբերին:

Փաստաբաններս խնդրեցին, որ կարենամ յաջորդ նիստին ներկայ գըտնուիլ, բայց դատաւորը մերժեց, փոխարէնը, սակայն առաջարկեց հեռակայ կարգով մասնակցիլ:

Անվտանգութեան Ծառայութիւնը անշուշտ երբեք չէ ներկայացուցած պահանջուող տարրերը:

Հոկտեմբերին իմացայ, որ դատաւորը փոխած են եւ 23 Նոյեմբերին, ժամը 14:30-ին, պէտք է նոր նախնական դատական նիստ կատարուի: Դատաւորի փոփոխութեան պատճառ չէ նշուած:

Կը դիմեմ Հայաստանի արդարադատութեան համակարգին՝ ձեռք բերելու իմ հեռացման պատճառները եւ զիս իրաւունք տալու մասնակցելու այս դատավարութեան: Իսկ եթէ Անվտանգութեան Ծառայութիւնը տակաւին չարունակէ չներկայացնել իմ հեռացման պատճառները, ես կ'անկրկնկալեմ, որ այս որոշումը կասկածի տակ դրուի: Իսկ եթէ ականատես ըլլանք արդարադատութեան պարզ ձեւականութեան, չեմ վարանիր անիկա փոխանցելու Մարդու Իրաւունքներու Եւրոպական դատարան, որպէսզի չեղարկէ այս անիսն որոշումը:

Ես կը պայքարիմ վերականգնելու համար Հայաստան վերադառնալու իմ իրաւունքը. երկիր, որուն համար պայքարած եմ աւելի քան 40 տարի:

**Մուրատ Փափագեան**  
**ՀՀԴ Բիւրոյի անդամ,**  
**Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու**  
**համակարգող խորհուրդի համանախագահ**  
**Փարիզ, 21 Նոյեմբեր 2023»**

## ՔՐԵՄԼԻՆ ՅՈՅՍՈՎ Է, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԱՇԽԱՏԱՆԵՐԸ ՀԱՊԿ-Ի ՇՐՋԱՆԱԿԻՆ ՄԵՋ

Հակառակ անոր որ Հայաստանի վարչապետն ու պաշտպանութեան նախարարը իրաժարած են մասնակցելէ Միւսքի Չորեքշաբթի օր սկսած ՀԱՊԿ-ի գագաթնաժողովին, քրեմլին յոյս յայտնած է, որ Հայաստան կը շարունակէ աշխատանքը ՀԱՊԿ-ի շրջանակին մէջ:



Փետկով՝ ընդօժեւելով. «Բնականաբար մենք կ'ակնկալենք, որ Հայաստան շարունակէ իր աշխատանքը կազմակերպութեան շրջանակին մէջ»:

Նախապէս Հայաստանի վարչապետն ու Արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչները բազմիցս յայտարարած են, որ Երեւան ներկայիս չի քննարկեր ՀԱՊԿ-էն դուրս գալու կարելիութիւնը, սակայն Հայաստանի ներկայացուցիչները վերջին ամիսներուն չեն մասնակցած կազմակերպութեան ձեռնարկներուն: Հայաստան յետս կանչած է Նաեւ ՀԱՊԿ-ի մէջ իր դեսպանը եւ Նորը չէ նշանակած:

«Անկասկած կարելի է ասիտանք յայտնել, որ Հայաստանի բարձր մակարդակով մասնակցութիւն չկայ գագաթնաժողովին: Մենք յոյսով ենք, որ մասնակցութիւն տեղի կ'ունենայ աշխատանքային, փորձագիտական մակարդակով», Չորեքշաբթի օր ըսած է քրեմլինի խօսակ Տիմիթի

## Տեղական Լրագրող

### Խմբագրական

#### ԱՐԱԲԱԿԱՆ ԵՒ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԻԱՑԵԱԼ ԶԱՆՔԵՐԸ՝ Ի ՆՊԱՍ ՊԱՂԵՍՏԻՆԻ

Արաբական Լիկան եւ Իսլամական Համագործակցութեան կազմակերպութիւնը առաջին անգամ ըլլալով միասնաբար արտակարգ գազաթնաժողով գումարեցին իրենց կարելին ընելու ի նպաստ Պաղեստինի:

Ժողովէն կազմուած նախարարական յանձնախումբ մը այցելեց Չինաստան, որ կը համարուի Միացեալ Նահանգներու գլխաւոր մրցակիցը եւ անդամ է ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդին, ճնշումի միացեալ ճակատ մը կազմելու ԱՄՆ-ի եւ Իսրայելի դէմ եւ հրադադարի ուրուագիծ մը գծելու:

Նոյն օրերուն ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդը որդեգրեց Մալթայի կողմէ ներկայացուած նախագիծը, որ Կազգայի մէջ մարդասիրական գինադադարներ հաստատելու կոչ կ'ուղղէր:

Ապահովութեան Խորհուրդին որդեգրած որոշումը կոչ կ'ուղղէր հաստատելու «շարք մը օրերու համար բաւարար գինադադարներ եւ ընդարձակ ու շտապ մարդասիրական միջանցքներ ստեղծելու»՝ արտօնելու Կազգայի մէջ քաղաքայիններուն մարդասիրական օժանդակութեան մատակարարումը:

Գրեթէ իր բոլոր պարբերութիւններուն մէջ մանուկներու կացութեան ակնարկող որոշումը կոչ կ'ուղղէր՝ «բոլոր կողմերուն յարգելու միջազգային օրէնքին հիմամբ իրենց ստանձնած յանձնառութիւնները, մասնաւորաբար ինչ կը վերաբերի քաղաքայիններուն, մանաւանդ մանուկներու պաշտպանութեան»:

Որոշումը նաեւ կոչ կ'ուղղէր՝ «անմիջապէս եւ առանց նախապայմաններու ազատ արձակելու բոլոր գերիները, մասնաւորաբար մանուկները, որոնք կը գտնուին Համասի եւ միւս խմբաւորումներուն մօտ»:

Միւս կողմէ Իսրայելի ու ԱՄՆ-ի վրայ ճնշում կը բանեցուէր տարբեր կողմերէ, Կազգայի մէջ գինադադարի հասնելու եւ կողմերը դիւանագիտական միջոցներով հարցերու քննարկման հրաւիրելու:

Սուրիոյ մէջ կայք հաստատած ամերիկեան ապօրինի ուժեր թիրախ սկսած էին դառնալ, Եմէի մէջ հուսիներու կողմէ գրաւուեցաւ Իսրայելեան նաւ մը, Լիբանանի սահմանին սաստկացան Իսրայել-լիբանանեան դիմադրութիւն բախումները:

Արաբական եւ Իսլամական երկիրներու միասնական կեցուածքը, ինչպէս նաեւ Չինաստանի նախապէս իրականացուցած Սեուտական Արաբիա-Իրան մերձեցումը, միեւնոյն ատեն Ռուսիոյ մերձեցումը Միջին Արեւելքի շարք մը երկիրներու, հակաիսրայելեան ճակատին յստակ ուրուագիծ հայթայթեցին:

Միացեալ Նահանգներ ընտրութիւններու սեմին կը գտնուի եւ դժուար թէ կամենայ բախումներուն տարածքը ընդլայնել ու որոշ ճակատներու վրայ իր ուժերը պաշտպանել թիրախ դառնալէ՝ ինչպէս Սուրիոյ, Իրաքի մէջ թէ այլուր:

Վերջին ժամերուն կողմերը հրադադարի մօտալուտ ըլլալուն մասին կը խօսին, սակայն հրադադարէն ետք արդեօ՞ք որոշ հարցերու շուրջ համաձայնութիւն կը գոյանայ, թէ բախումները պարզապէս կը յետաձգուին:

«Գ.»

-Երեքշաբթի, 22 Նոյեմբերին, Իսրայելեան հրթիռակոծման հետեւանքով Նահատակուեցաւ «Մայատին» պատկերասփիւռի կայանի լրագրող Ֆարահ Մանսուր եւ լուսանկարիչ Ռապիհ Մամարի, որոնք կը գործէին Լիբանանի հարաւային Թեր Հարֆա ճրպային շրջանին մէջ: Նահատակուեցաւ նաեւ քաղաքացի Հասան Աքիլը:



-Կազգայի վրայ Իսրայելեան գրոհին 47-րդ օրը արձանագրուեցաւ աւելի քան 14.120 Նահատակ, որուն 5840-ը՝ փոքրեր, եւ աւելի քան 33.000 վիրաւոր, որուն 75%-ը՝ փոքրեր եւ կիներ:

Պաղեստինի Առողջապահութեան Նախարարութիւնը նախօրոք հաղորդագրութեամբ յայտնած էր, որ Կազգայի մէջ 35 հիւանդանոցէն 26-ը ծանայութենէ դուրս եկած է:

Իսրայելի հրթիռակոծման եւ վառելանիւթի չգոյութեան հետեւանքով, աւելցնելով, որ Կազգայի հիւսիսային բաժինի հիւանդանոցները ամբողջութեամբ դադրած են գործել եւ վիրաւորները բուժուելու փոխարէն կը Նահատակուին: Նախարարութիւնը հաղորդագրութեան մէջ հաստատեց, որ Իսրայել իր գրոհը սաստկացնելով յատկապէս Կազգայի հիւսիսային բաժինին ուղղութեամբ, բնակիչներուն պարտադրել լքել իրենց բնակարանները եւ տեղահանուելով դէպի հարաւ ուղղուիլ:



-Պաշտպանելու համար Իսրայելեան գրոհին դէմ պայքարող Պաղեստինի ժողովուրդը, Պաղեստինեան Ազգային Դիմադրութիւնը յայտարարեց, որ Կազգայի մէջ 4-օրեայ գինադադարի շուրջ համաձայնութիւն գոյացաւ, սակայն թուականը տակաւին ճշդ դուած չէ:

Դիմադրութիւնը յայտնեց, որ գինադարի համաձայնութիւնը կ'ընդգրկէ Կազգայի բոլոր շրջաններուն մէջ երկու կողմերուն միջեւ գինադադար եւ Իսրայելեան բանակին կողմէ գինուորական գործողութիւններու դադրեցում: Համաձայնութիւնը պիտի ներառէ նաեւ մարդասիրական եւ բժշկական օժանդակութեամբ եւ վառելանիւթով բեռնուած հարիւրաւոր փոխադրակառքերու մուտքը Կազգա:



Դիմադրութիւնը աւելցուց, որ համաձայնութիւնը կ'ընդգրկէ նաեւ Իսրայելացի կալանաւորուած 50 կիներու եւ 19 տարեկանէն նուազ փոքրերու ազատ արձակումը, որուն փոխարէն պաղեստինցի կալանաւորուած 150 կիներու եւ 19 տարեկանէն վար փոքրերու ազատ արձակումը:

- Փենթագոն յայտնած է, որ 17 Յոկտեմբերէն ի վեր Իրաքի եւ Սուրիոյ մէջ տեղի ունեցած են ամերիկեան ուժերու դէմ 56 յարձակումներ, որոնց հետեւանքով 59 ամերիկացի զինուորներ ուղեղի ցնցումային վնասներ կամ թեթեւ վէրքեր ստացած են:



- RT լրատուականը տեղեկացուց, որ Չորեքշաբթի, 22 Նոյեմբերին Դամասկոսի արուարձանին մէջ գտնուող «Սայիտա Չայնայա» շքրջանը Իսրայելեան յարձակումի ենթարկուեցաւ: Պայթիւնը լսուեցաւ նաեւ մայրաքաղաք Դամասկոսի մէջ:



Լուրեր Հայաշխարհին

ԼԻԼԻԹ ՉԱՍՏԵԱՆ. «ԿԱՐԵԼԻ ԳԵՂԱՒ ԿԱՆԽԵԼ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԱՂԵՏԸ»

ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովի Հայաստանի Ազգային ժողովի պատուիրակության անդամ, «Հայաստան» խմբակցության ներկայացուցիչ Լիլիթ Չաստեան ելույթ ունեցած է Երեւանի մեջ կատարուող ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովի աշխատանքին նստաշրջանին:

Լիլիթ Չաստեան յիշեցուցած է գործընկերներուն, որ միջազգային հանրութեան ուղղուած Հայաստանի կոչերը տեղ չհասան, եւ կարելի չէր լաւ կանխել Լեռնային Ղարաբաղի աղէտը:

«Յարգելի՛ գործընկերներ,

Մեր նստաշրջանը տեղի կ'ունենայ աշխարհաքաղաքական անկայուն միջավայրի մէջ, ուր հարցականի տակ են հազարաւոր անմեղ մարդոց հիմնարար իրաւունքները, հազարաւոր մարդիկ կը տառապին պատերազմի եւ յարձակումի պատճառով:



Յաւօք, մեր տարածաշրջանը նոյնպէս վերածուած է հակամարտութեան փոթորկուն խաչմերուկներու:

Այն, ինչ տեղի ունեցաւ Լեռնային Ղարաբաղի մէջ, միջազգայնորէն ճանչցուած յանցագործութիւն է՝ նպատակադրուած վերացնելու որոշակի ցեղային խումբ: Եւ, այնուամենայնիւ, այս ողբերգութենէն կարելի էր խուսափիլ, եթէ միջազգային հանրութիւնը հետաքրքրուած ըլլար: Կանխորոշուող աղէտի մասին մեր զգուշացումներն ու տագնապները անպատասխան մնացին, իսկ միջազգային հանրութեան շարունակուող անհամարժէք արձագանգը կանաչ լոյս վառեց, որ պատասխանատուութեան չենթարկուող Ատրպէյճանը զինուորական նոր յանցագործութիւններ իրականացնէ:

Ատրպէյճանի կողմէն իրականացուած սովի ցեղասպանական շրջափակումը մէկ նպատակ ունէր՝ իր երեքհազարամեայ հողէն ու հայրենիքէն դուրս մղելու Լեռնային Ղարաբաղի բնիկ բնակչութիւնը:

Սօտաւոր 150.000 հայ՝ պատերազմի ժամանակ տեղահանուածները, բռնի տեղահանութեան պարագային յայտնուեցան Հայաստան:

Հակառակ 9 Նոյեմբերի յայտարարութեան, Ատրպէյճանի մէջ ապօրինաբար առեւտրուած եւ կալանաւորուած եւ պահուած են շուրջ 55 հայ ռազմագերիներ, քաղաքացիական անձեր՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ընտրուած քաղաքական ղեկավարութիւնը: Իրականութեան մէջ անոնք այլեւիսկ վարչակարգի քաղաքական բանտարկեալներ են:

Լեռնային Ղարաբաղի բռնագրաւուած տարածքներու մէջ Ատրպէյճան կ'իրականացնէ հայկական հարուստ մշակութային եւ կրօնական ժառանգութեան վերացման փաստագրուած քաղաքականութիւնը:

Աւելին, Ատրպէյճանի կողմէ կը շարունակուին բռնագրաւուած մնալ Հայաստանի 200 քառակուսի քիլոմետր ինքնիշխան տարածքներ, եւ կը շարունակուի Հայաստանը «Արեւմտեան Ատրպէյճան» համարող հռետորաբանութիւնը:

Անշուշտ, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը բարձր կը գնահատէ միջազգային մարդասիրական օգնութիւնը: Բայց այն, որուն անոնք կը ձգտին, իրենց ապահով վերադարձնել իրենց հայրենիքը: Ոչ ոք կրնայ զիրենք զրկել սեփական ՀԱՅՐԵՆԻԻԹԻ մէջ ապրելու եւ ինքնորոշուելու իրաւունքէն:

Մենք պէտք է գիտակցինք, որ Ատրպէյճանի բռնապետիրական վարչակարգը չի կրնար հայերու իրաւունքն ու անվտանգութիւնը երաշխաւորել, եւ խաղաղութեան համաձայնագիրը, ըստ էութեան, պիտի յանգեցնէ ցեղային գտումներու:

Մեր կազմակերպութեան նկատմամբ վստահութիւնը կախեալ է նաեւ մեր անհատական պատասխանատուութենէն: Ահա, թէ ինչո՞ւ կոչ կ'ուղղեմ իմ գործընկերներուն՝ սատարելու իրական արդարութեան, իրական ժողովրդավարութեան ու մարդու իրաւունքներուն: Արդեօք մենք բաւարար ջանքեր կը գործադրե՞նք ներկայիս կամ ապագայ պատերազմներն ու ցեղասպանութիւնները կանխարգիլելու համար:

Առաջարկութիւնս է, որ մեր կազմակերպութեան յանձնառութիւններով իրական ջանքեր ի գործ դնենք, իրական անվտանգային ձեւաչափեր եւ երաշխիքներ գործադրենք, որպէսզի կարենանք ապահովել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան վերադարձը սեփական Հայրենիք:

Հակառակ պարագային, մենք բոլորս հերթական ողբերգութեան եւ պատերազմի վկան պիտի դառնանք՝ քաժնեկցելով ողջ պատասխանատուութիւնը»:

ԽԱՉԱՏՈՒԲԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆ ՄԵԾԱՊԵՍ ՇԵՏԱՔՐՔՐՈՒՄԸ ԻՐԱՔԻ ՇԵՏԵՐԿՎՈՐՄ ՕՐԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՅՄԱՐ, ՄԱՍՆԱԽՐԱՊԵՍ՝ ԱՌԵՏՐԱՏՆԵՍԱԿԱՆ ՈՒՐՄԻՆ ՄԵՉ»

Իրաք կը հանդիսանայ միջինարեւելեան տարածաշրջանի մէջ Հայաստանի կարեւոր եւ վստահելի գործընկերը: Ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնփրես»-ը, Իրաքի նախագահ Ապտուլ Լաթիֆ Ռաշիտի հետ հանդիպումէն ետք տեղի ունեցած միացեալ յայտարարութեան ընթացքին յայտնած է Հայաստանի նախագահ Վահագն Կապտուրեան:

Հայաստանի նախագահը շեշտած է որ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատումէն ի վեր այս մէկը Իրաքի նախագահի առաջին պաշտօնական այցելութիւնն է Հայաստան, ինչ որ նոր է կը բանայ հայ-իրաքեան յարաբերութիւններուն մէջ, ինչպէս նաեւ խորացման, ընդլայնումի հօգ լիցք կը հաղորդէ բարեկամ պետութիւններու միջեւ բազմուրրտ համագործակցութեան:



Հայաստանի նախագահը գոհունակութեամբ արձանագրած է, որ Հայաստանի անկախութենէն ի վեր, արաբական երկիրներու հետ յարաբերութիւնները կը զարգանան փոխվստահութեան եւ ջերմ բարեկամութեան մթնոլորտի ներքեւ:

Ապա աւելցուցած է, որ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու գործուն գարգացման համար հաստատուն հիմք կը հանդիսանան ինչպէս հայ-արաբական պատմամշակութային ամնջութիւններու հարուստ անցեալը, այնպէս ալ Իրաքի մէջ դարերու պատմութիւն ունեցող հայ համայնքի առկայութիւնը:

Նախագահին խօսքով՝ Հայաստան մեծապէս հետաքրքրուած է Իրաքի հետ երկկողմ օրակարգի զարգացման, մասնաւորապէս առեւտրատնտեսական ոլորտին մէջ:

Հայաստանի եւ Իրաքի նախագահները հանդիպման աւարտին վերահաստատած են միջպետական յարաբերութիւնները խորացնելու երկու կողմերու պատրաստակամութիւնը:

ԱՄՆ ՇԵՐԱԿՈՅՏԻՆ ԸՆԴՈՒՆԱԾ ՕՐԻՆԱԳԻԾԸ ՊԱՔՈՒԵԻ ՊԱՅՏԸՆԻ ՎԱՐՉԱՎԱՅՄԻՆ ՈՒՂՈՒՄԸ ՅՍՏԱԿ ՊԱՏՎԱԿ Է

Հայ Դատի Յանձնախումբը կը շարունակէ աշխատիլ ԱՄՆ նախագահի բոլոր թեկնածուներուն հետ: Այս մասին Alpha News-ին հետ զրոյցի ընթացքին ըսաւ ԱՄՆ Հայ Դատի Յանձնախումբի մամուլի քարտուղար Էլիզաբեթ Չուլճեան:

«Մէկ տարի մնացած է Ամերիկայի նախագահական ընտրութիւններուն, եւ Հայ Դատի Յանձնախումբը կը շարունակէ աշխատիլ բոլոր թեկնածուներուն հետ: Մենք ամէն ինչ կ'ընենք հասկնալու իրենց տեսակետը արցախեան հարցին շուրջ, Հայաստանի ապահովութեան հարցին շուրջ, եւ թէ արդեօք անոնք կը հասկնան, թէ ինչ հսկայական մարտահրաւերներ նետած է Ատրպէյճան Հայաստանին», ըսած է Չուլճեան:



Անոր համաձայն, նախորդ օրերուն հանդիպում տեղի ունեցած է նախագահի թեկնածուներուն հետ, որուն ընթացքին թեկնածուները դատապարտած են Ատրպէյճանն ու անոր վարած քաղաքականութիւնը:

«Պաքուի ցեղասպան քաղաքականութիւնը դադրեցնելու միակ տարբերակը անոր ռազմական օժանդակութենէն զրկելն է: ԱՄՆ Ծերակոյտին՝ «Հայաստանի պաշտպանութեան գործողութիւն 2023» օրինագիծին ընդունումը յստակ պատգամ է՝ Պաքուին եւ Պայտընի վարչակազմին ուղղուած: Ըստ Ծերակոյտին՝ Պաքուի ցեղասպան քաղաքականութիւնը դադրեցնելու միակ տարբերակը անոր ռազմական օժանդակութենէն զրկելն է: Այդ պէտք է ըլլայ ոչ թէ վերջին, այլ առաջին պատժամիջոցը, որ ամերիկեան կառավարութիւնը կրնայ որդեգրել Պաքուի շարունակական յարձակողական քաղաքականութեան դէմ: Թէեւ այս ամէնը պէտք է ըլլար այն ժամանակ, երբ Ատրպէյճան տասը ամիս շարունակ շրջափակած էր Արցախը՝ մարդոց ենթարկելով սովի», ըսաւ Չուլճեան:

Ապա նկատել տուաւ, որ շրջանցելով ռազմական օժանդակութենէն զրկելու օրէնքը՝ ամերիկեան կառավարութիւնը մեղսակից դարձած է Ատրպէյճանի ցեղասպան քաղաքականութեան:

«Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը այսօր ամէն ինչ կ'ընէ, որ ընդլայնէ Արցախի հայութեան մարդասիրական օժանդակութիւնը, մինչեւ անոր ապահով վերադարձը հայրենիք: Շատ կարեւոր է, որ կրճատուի Ատրպէյճանին ռազմական օգնութիւն տրամադրելը, բայց պէտք է աւելին իրականացնել, քանի որ Այլեւի կառավարութիւնը կը շարունակէ իր յանցագործութիւնները՝ հայ ռազմագերիները ազատ չարձակելով: Պատժամիջոցները տեղին են, եւ ռազմական օժանդակութենէն զրկելը առաջին քայլը պէտք է ըլլայ, որպէսզի կարենանք յստակ ազդանշան դրկել ամերիկեան կառավարութեան՝ ցոյց տալով, որ որեւէ երկիր չի կրնար նման ցեղասպան քաղաքականութիւն վարել եւ անպատիժ մնալ», եզրափակեց Չուլճեան:

## ՆՈՒ ԵՏՐԵՔԻ ՔԱՂԱՔԱԿԵՏԸ ՈՒՅՑԱՐԿԱՆ ԸՆԴՈՒՄԵՆՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿԵՐՊԻՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԹՈՒՐՔԻՅԱՆ ԱՌՆՈՒՄԸ 80 ՁԵՆԱՐԿԻ



Յարութ Սատունեան

Երեք շաբաթ առաջ, երբ առաջին անգամ գրեցի Նիւ Եորքի քաղաքապետ Էրիք Ետրմզի քարոզարշաւի՝ Թուրքիոյ հետ ունեցած կապերուն վերաբերեալ FBI-ի հետախուզութեան մասին, ես չէի պատկերացներ, որ ատիկա Փանտորային տուփը բանալ կը նշանակէ:

Անցեալ շաբաթ Ետրմզ ստեղծեց պաշտպանութեան հիմնադրամ՝ գումար հաւաքելու համար, որպէսզի վճարում կատարէ 2021-ի Նախընտրական իր քարոզարշաւին ընդդէմ դաշնակցային հետախուզութեան իրաւական ծախսերուն դիմաց: Օրէնքը թոյլ կու տայ Ետրմզի՝ իրաքանչիւր ոքէ ստանալ մինչեւ 5000 տուար նուիրատուութիւն: Այսուամենայնիւ, ան պետք է բացայայտ բոլոր նուիրատուներուն անուններն ու հասցէները:

Ըստ New York Post-ի՝ «Դաշնակցային իշխանութիւնները կը հետախուզեն, որ Թուրքիոյ կառավարութիւնը կամ Թուրքիոյ քաղաքացիները անօրինական կերպով նուիրատուութիւններ կատարած են Ետրմզի քարոզարշաւին՝ օգտագործելով «կեղծ նուիրատուներ»-ու ծրագիր մը, ուր պաշտօնական գրառումներու մէջ թուարկուած նուիրատուները ֆինանսաւորման իրական աղբիւրը չեն, եւ թէ՛ Ետրմզ ծառայութիւն կատարած է ծառայութեան դիմաց»:



Բազմաթիւ աղբիւրներ ըսած են New York Post-ին՝ «Ետրմզի վարչակազմի աշխատակիցը, որ, ինչպէս կ'ենթադրուի, «ոչ պատշաճ կերպով վարուած է» իր քարոզարշաւի դրամահաւաքին վերաբերեալ դաշնակցային փոխախտի հետազոտութեան ընթացքին, աշխատած է քաղաքի Միջազգային յարաբերութիւններու գրասենեակը, նախքան անակնկալօրէն ժամանակաւոր հեռացումը»:

Տեղեկութիւնը հաստատած են քաղաքապետարանէն: Այդ անձնաւորութիւնը Ռանա Ապասովան է, որ քաղաքապետի արարողակարգի տնօրէն էր: Ծագումով ատրաքեյճանցի պաշտօնեան կատարած է քաղաքապետի ձեռնարկներուն նախնական ծրագրաւորումն ու արհեստագիտական ապահովումը եւ ճամբորդած անոր հետ: Տարեկան աշխատավարձը 80 հազար 651 տուար է: New York Post-ին յայտնած են, որ ան ստած է դաշնակցային քննիչներուն:

Ապասովա նախապէս աշխատած է իբրեւ համայնքի համակարգող եւ Ետրմզի խորհրդակցական, երբ վերջինս Պրուքլինի շրջանի ղեկավարն էր: Անոր կենսագրութեան մէջ կ'ընդունի. «Պատասխանատու էր միջազգային յարաբերութիւններու եւ շրջանի ղեկավարի ու շահագրգիռ կողմերու միջեւ յարաբերութիւններու պահպանման համար, ներառեալ Մերձավոր Արեւելքի եւ Կերտնական Ասիոյ երկիրներու, մահաբանական եւ ռուսալեզու համայնքներու եւ ոչ առեւտրական կազմակերպութիւններու: Ան նաեւ աշխատած է ղեկավարութեան եւ հիւսկապտութիւններու հետ՝ երկիրներու եւ Պրուքլինի շրջանի ղեկավարի գրասենեակի միջեւ յարաբերութիւնները հաստատելու համար՝ օգնելու յարաբերել լեզուական խոչընդոտները եւ մշակութային տարբերութիւնները: Նաեւ կազմակերպած է «Թրքական ժառանգութեան» ձեռնարկները եւ աջակցած քոյր քաղաքներու համաձայնագիրներուն: Ապասովա նաեւ Ետրմզի One Brooklyn Fund ընկերութեան վարչական օգնականն էր, երբ ան դեռ շրջանի ղեկավար էր»:

The City լրատուական կայքը յայտնած է, որ 2017 թուականի Ապրիլին Ապասովա կազմակերպած է հանդիպում շրջանի ղեկավար Ետրմզի եւ «Թիւրքեն» հիմնադրամի, գորյառաջացուցած է նախագահ Էրտողանի գաւազնը՝ Պիլալ: «Թիւրքեն»-ի խորհուրդի անդամներէն երեքը ընդհանուր առմամբ 6000 տուար ներդրած են քաղաքապետի քարոզարշաւին: Անոր ժամանակացոյցը կը նշէ, որ մասնակցած է «Թիւրքեն»-ի չորս ձեռնարկներուն: «Թիւրքեն» Արդարադատութեան նախարարութեան մէջ արձանագրուած է իբրեւ օտարերկրեայ գործակալ:

Ապասովա Ետրմզի համար կազմակերպած է առնուազն երեք «հանդիպումներ եւ ձեռնարկներ՝ կապուած Թուրքիոյ հետ, երբ ան շրջանի ղեկավար էր՝ անոր ժամանակացոյցի քննութեան համաձայն: Անոնցմէ էր՝ 2015-ին Պրուքլինի մէջ թրքական ճաշարանի բացման հանդիսարարարողութիւնը, գոր ան նշած էր իբրեւ «կարեւոր»:

POLITICO կը հաղորդէ, որ իբրեւ Պրուքլինի շրջանի ղեկավար՝ Ետրմզ «ուր տարուան ընթացքին մասնակցած է Թուրքիոյ նուիրուած մօտաւորապէս 80 ձեռնարկներու, որոնց շարքին՝ 2015-ին՝ դրօշի բարձրացման արարողութիւնը, 2018-ին՝ բարեգործական պարահանդէսը եւ 2020-ին՝ Թուրքիոյ հիւսկապտութիւնը հետ Zoom հանդիպումը»:

Ետրմզի հրապարակային հազարաւոր ժամանակացոյցերը եւ ընկերային ցանցերու բազմաթիւ գրառումները ուսումնասիրելէ ետք, POLITICO

բացայայտած է անոր «անսովոր սերտ յարաբերութիւնները Թուրքիոյ հետ, ինչ որ արժանացած է դաշնակցային քննիչներու ուշադրութեան»: 2019-ին, երբ Ետրմզ «կը սկսէր պայքարը Նիւ Եորքի քաղաքապետի պաշտօնին համար, ան միացած է Մարթա Սթիւարթի՝ «Թրքական օդանաւային թռիչքներ»-ու (Turkish Airlines) կալա տոնակատարութեան ժամանակ, ընկերութիւն մը, որ այժմ ներգրաւուած է Ետրմզի նախընտրական քարոզարշաւի ֆինանսներու մասին FBI-ի ընթացիկ հետազոտութեան մէջ: Ձեռնարկի ընթացքին Ետրմզ լուսանկարուած է ընկերութեան երկու պաշտօնեաներու ձեռքերը բռնած կարկանդակի վրայ: քաղաքապետի մրցակազմին մէջ յաղթելէ ետք ան այդ պաշտօնեաներէն մէկը՝ Չենկ Օճային, նշանակեց իր անցումային խումբին մէջ»: CNN ըսած է, որ 2 Նոյեմբերին «Թրքական օդանաւային թռիչքներ»-ու ղեկավարին տունը եղած է շարքին մէջ այն վայրերուն, որոնք խուզարկուած են FBI-ի կողմէ:

POLITICO-ի վերլուծումը Ետրմզի՝ Պրուքլինի շրջանի ժամանակացոյցի մասին, կատարած է երեք մատնանշում թրքական օդանաւային ընկերութիւններու օդանաւային փոխադրումի համար նախատեսուած երկու խնձոյքներ՝ 2019 եւ 2020 թուականներուն, եւ 2 Ռոյտերներ 2015-ի գաղտնի գրառումը, ուր պարզապէս գրուած էր. «վերադասարել կ. Ե. ժամը չորսին, Թրքական օդանաւային ընկերութիւն. Ռանա (Ապասովա), իմ նուիրութիւնը»:

Ետրմզ ճնշում գործադրած է այն ժամանակ Նիւ Եորքի հրդեհային ծառայութեան յանձնակատար Դանիէլ Նիկոյի վրայ, որպէսզի ան, հակառակ ապահովութեան մտահոգութիւններուն, թոյլատրէ բարձրարակ շէնքի բացումը, ուր կը գտնուէր թրքական հիւսկապտութիւնը՝ Նոյնիքս նախագահ Էրտողանի ժամանման առիթով: Նիկո ստացած է դատարանի ծանուցագիրը եւ խօսած՝ FBI-ի գործակալներու հետ:

Անցեալ տարի քաղաքապետ դառնալէ ետք Ետրմզ առցանց ելոյթ ունեցած է Սթամպուլի մէջ անշարժ գոյքի համաժողովին, որուն մասնակցած են քաղաքի երկու բարձրաստիճան պաշտօնեաներ: Սակայն քաղաքապետի մասնակցութիւնը դուրս մնացած է իր ամենօրեայ հանրային ժամանակացոյցէն եւ չէր գեկուցուած:

Բացի այն տունէն, ուր քաղաքապետի քարոզարշաւին համար դրամահաւաք կազմակերպուած էր, FBI խուզարկութիւններ կամ հարցազրոյցներ ունեցած է տասնեակ վայրերու մէջ՝ իբրեւ թրքական աղբիւրներէ քարոզարշաւի նուիրատուութիւններու հետաքննութեան մաս, կը հաղորդէ CNN:

2022-ին, «Ետրմզ երկու ուղեւորութիւն կատարած է դէպի Թուրքիա. Մէկը՝ Օգոստոսին, ֆինանսաւորուած՝ բազմաթիւ կազմակերպութիւններու կողմէ, անոնց շարքին՝ Թուրքիոյ հիւսկապտութիւնը, համաձայն POLITICO-ի ձեռք բերած ֆինանսական բացայայտման: Տեղական THE CITY լրատուականը վերջերս ըսած է, որ «Թրքական օդանաւային թռիչքները» նոյնպէս մասնակցութիւն ունեցած է այդ ճամբորդութեան, սակայն այդ չէ նշուած պահանջող տարեկան բացայայտման մէջ: Չորս ամիս անց, ըստ ֆինանսական բացայայտման, կազմակերպութիւն մը, որ կը կոչուի 2բօսաշրջութեան երիտասարդ առաջնորդներու ընկերակցութիւն, ֆինանսաւորած է Ետրմզի եւս մէկ ուղեւորութիւնը դէպի Թուրքիա: Այս ճամբորդութիւնները քաղաքապետին կողմէ կատարուած կէս տասնեակ ճամբորդութիւններու մէկ մասն էին, որ, ըստ քաղաքապետին, կատարած է դէպի այդ երկիրը, ներառեալ 2017-ի այցելութիւնը իր գաւազնի՝ Ծորտընի հետ», ըստ POLITICO-ի:

Ըստ թրքական «Սապահ» թերթի՝ Պրուքլինի շրջանի ղեկավարի պաշտօնով Թուրքիա այցելութեան ընթացքին Ետրմզ ըսած է, որ հետաքննութեան ընթացքին մէջ տուն գնելու հարցով: Ետրմզ նաեւ ըսած է, որ այնքան գոհ է «Թրքական օդանաւային թռիչքներէն», որ այդ օդանաւային ընկերութեամբ ան կը թռչի ոչ միայն Թուրքիա, այլեւ աշխարհի այլ մասեր, օրինակ՝ Յնդկաստան:

### Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

## ՄԵՐ ԳՎՂՈՒԹԻ... Սկիզբ՝ էջ 5

ՍՕ Խաչի արտադրած ձեռագործները կամ ցուցահանդէսներու աւարտին չսպառած կարկանդակներն ու սենեկային բոյսերը սպառելու համար խանդավառութեամբ, առանց տատամսելու կը դիմէինք Յակոբեան, Չամիչեան, Մահսերեճեան կամ Զեյվանեան ընտանիքներուն ու անսահման ուրախութեամբ մեր ստացած նուիրատուութիւնները կը յանձնէինք պատասխանատուներուն, մեր հոգիներուն մէջ ունենալով իրենց քաջալերանքի խօսքերը: Ինչպէ՞ս չխանդավառուէինք, երբ այդ գումարներով ընկերաբժշկական շէնքը իր աւարտին պիտի հասցնէինք եւ կամ պաշտօնութեան աշխատավարձերը ապահովէինք: Ընկերուի վերծինը միշտ հատարիմ մնաց իր եղբոր նուիրաբերողի գիծին ու նիւթական հարըստութիւնը հոգեկան արժեքի վերածեց:

Սիրելի՛ ընկերուի, մեր եւ շատ-շատերու փնտռուած բարեկամուհին էիր: Անակնկալ մահովդ սուգի մէջ թողուցիր հարազատներդ, շրջապատդ, միութենական ընկերուիներդ եւ բարեկամներդ. սակայն վստահ եղիր, քու բարի յիշատակդ մեր մէջ պիտի ապրի, որովհետեւ անցած ճանապարհդ լեցուն է բարի արարքներով: Այսօր կը խոնարհիմք ինկելի յիշատակիդ առջեւ եւ բարձր կը գնահատենք քու բոլոր ներդրումներդ, յատկապէս՝ ՍՕ Խաչ-Ազգ. Պատըսպարանէն ներս, ինչ որ մատուցեցիր անշահախնդրօրէն: Զանգէ՛ր խաղաղ ու ապրե՛լ լոյսերու մէջ:

## ՄԵՐ ԳԱՂՈՒԹԻ «ԱՄՄԷ»-Ն

Սիրելի՛ ընկերուհի Վերժին, Ընտանեկան պարագաներուդ հետ սուգի մատնեցիր Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մարմինները ու Նաեւ ՍՕ Խաչի ընտանիքը, որովհետեւ երիտասարդ տարիքեղ ամբողջ Եութեամբդ եղար հաւատաւոր միութենական մը, հաւատարիմ պատկանելիութեանդ, սկզբունքներուդ եւ հայրենակցական ժառանգութեան արմատներուդ:

Կեանքով լեցուն ընկերուհի՛, անխորտակելի կը թուէր բոլորիս ու յանկարծ մարեցար ու վերջնականապէս փակեցիր աչքերդ:

Գլխաւոր բաղձանքդ ու տեսլականդ էր Յակոբեան ընտանիքին միասնական դիմագիծի պահպանումը: Անխնայ եւ համակ նուիրումով հորաքոյր էիր, Նաեւ անգին մայր եղբորդ գաւակներուն, որոնք առած էիր հովանիիդ տակ:

Մահուանդ գոյժը նոր ստացած, յիշողութեան մէջ գացի դէպի 1982-83 թուականներ, երբ առաջին անգամ քեզ տեսանք Ազգ. Պատասպարանի բակին մէջ՝ երիտասարդ, սիրուն, շէկ օրիորդ մը, որ եկած էր Պատասպարանի փոքրիկները գաղտնիքով եւ անոնց հոգ տանելու: Քիչ մը գարմանքով, քիչ մըն ալ հետաքրքրութեամբ ծանօթացանք, առանց գիտնալու որ երկար տարիներ արժանի պիտի ըլլայիր խաչուհիներուն մտերմութիւնը վայելելու ու շատ-շատերու ուշադրութեան արժանանալու:

Այսօր, նոր սերունդը տեղեկ չէ սուրիահայ մեր միութենական կեանքի հոլովոյթներուն, քանի որ հետամուտ չենք եղած մեր ընկերային եւ յարաբերական արժեքները լոյսի բերելու, տարուած գործունեութիւնը գնահատելու, ծառայողներուն յիշատակը յարգելու եւ գանձը արժեւորելու:

Սուրիահայ տարեգրութեան մէջ անպայմանօրէն պիտի արձա-

նագրուի Յակոբեան ընտանիքին անունը, որուն իւրաքանչիւր անդամը ներկայութիւն էր եւ է՝ մեր ազգային ու միութենական մարմիններուն մէջ:

Ընկի. Վերժին Յակոբեան մասնակցութիւն բերած է ՍՕ Խաչի կազմակերպչական եւ ժողովական կառուցին: Անդամակցելով ՍՕ Խաչի «Անի» մասնաճիւղին, ընդմիջաբար մաս կազմած է Ազգ. Պատասպարանի եւ Խնամատարական յանձնախումբերուն, միշտ ըլլալով համով ներկայութիւն մը եւ փնտռուած ընկերուհի մը: Մեծ ներդրում ունեցած էր ընկերաբժշկական կեդրոնի կառուցման մէջ՝ իր նւիրական եւ բարոյական աջակցութեամբ: Մեծահոգի էր ու մեծ բարերար: Առանց յոխորտանքի, անելորդ հպարտութեան, առանց ցուցական ինքնասիրութեան, լուռ կը գործէր: Միջոցները տարբերութիւն չէին ընդերքին համար ու հայկական խոհանոց, հայկական տօներ ու տոհմիկ ճաշեր հաճոյք էին պարգապէս: Կարելորդ՝ իրենց տան սեղանը միշտ բաց էր բոլորին համար, յատկապէս՝ վեհափառ հայրապետներու, սրբազան հայրերու, կղերներու, հայրենի մտաւորականներու կամ հիւպատոսներու՝ միշտ գերակշիռ պահելով ազգային ու Նահապետական արժեքները:

Վերժինը պահեց Նահապետական ընտանիքի մը աւանդական արժեքները եւ այդ սերը կրցաւ փոխանցել իր ընտանիքի անդամներուն, որոնց իւրաքանչիւրը 2023-ի ներդրում բերաւ Սուրիահայ Օգնութեան Խաչին ու ազգին: Առանց Յակոբեան ընտանիքի գոհաբերումի ոգիին եւ իշխանական նուիրատուութիւններուն կարգ մը կառուցներ չէին հասներ իրենց վերելքին:

**Յանուն ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան Դոկի Կանանեան**

Շար. էջ 4

## ԴԱՄԲԱՆԱԿԱՆ՝ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՎԵՐԺԻՆ ՅԱԿՈԲԵԱՆԻ

(Արտասանուած Բերիոյ Հայոց Թեմի Նախկին Առաջնորդ, Կիլիկիա Մատենադարանի մատենադարանապետ Գերշ. Տեր Շահան Արք. Սարգիսեանի կողմէ, Հալէպ)

«Ան իր ամբողջ ունեցածը իր գոյութեան չափովը տուաւ, որովհետեւ սիրեց»: Աւետարանին մէջ կը նկարագրուի, թէ ինչպէ՛ս Յիսուս օր մը տաճարին առջեւ կը դիտէր ժողովուրդը, որ անցնելով տաճարին դիմացէն իր լուման կը նուիրէր տաճարին: Երբ այրի կին մը անցաւ եւ երկու լումա գանձանակին մէջ դրաւ, Յիսուս իր աշակերտներուն դառնալով ըսաւ. «Այս այրի կինը շատ անելին դրաւ գանձանակին մէջ, քան բոլոր անոնք, որոնք ունէին եւ իրենց ունեցածին անելորդ բաժինէն դրին»:

Այս բնաբանը ընտրեցի հանգուցեալ Վերժին Յակոբեանի՝ Ամմէի յիշատակին. անձնաւորութիւն մը, որ իր ամբողջ կարողութեամբ, Աստուծոյ իրեն տուած հոգեւոր եւ մարդկային շնորհներով նուիրուած էր իր շրջապատին՝ Աստուծոյ Արքայութեան արժանանալու համար:

Համախմբուած ենք այստեղ մեր սիրոյ պարտքը տալու Ամմէին, որուն անունը հանրածանօթ է Հալէպէն մինչեւ Ճեզիրէ եւ բազում այլ վայրեր ապրող մեր ազգակիցներուն: Աստուած իւրաքանչիւրս իւրայատուկ ստեղծած է, մէկս միւսին չենք նմանիր, բայց այս աշխարհէն մեկնած ատեն մեր տուածին համապատասխան իւրայատուկ արժէք կը դառնանք Աստուծոյ համար, Նաեւ մարդոց յիշողութեան մէջ: Ամմէն Յակոբեան ընտանիքին մէջ եւ անկէ անդին իր իւրայատուկ տեղը ունեցաւ եւ կը շարունակէ ունենալ: Ան թէեւ ֆիզիքապէս մայր չեղաւ, բայց մայրութիւն ըրաւ իր ընտանիքին, թոռներ ունեցաւ, ծոռներ ունեցաւ եւ Տերը իր շնորհքը առատօրէն բաշխեց Յակոբեան ընտանիքին եւ իր շնորհապատին: Այսօր, ո՛չ միայն այստեղ, այլ աշխարհի տարբեր կողմերէ սըրտակից մարդիկ կ'աղօթեն Վերժինի հոգւոյն խաղաղութեան համար:

Ամմէ անգամ որ ննջեցեալին առջեւ կը կանգնինք, չենք խօսիր մահուան մասին: Մենք կը ծնինք յարութեան տեսիլքով, կը մկրտուինք յարութեան համար եւ եթէ մեր Տիրոջ հետ քալենք, յարութեան ժառանգորդը կը դառնանք:

Վերժինը իր բարի նկարագրով, քաղցր ժպիտով նոյնիսկ սխալներու հանդէպ իր անկեղծ դիտողութեամբ մեր բոլորին յարգանքին արժանացաւ, որովհետեւ յարութեան հաւատքով ապրեցաւ, իր կեանքին մէջ արժեքներ որդեգրեց ու պահեց գանձը, անոնցմով արժեւորեց իր կեանքը:

Ես որպէս հոգեւորական իր պայծառ ներկայութեան, դժուարութիւններուն մէջ համբերատարութեան, նոյնիսկ Սուրիոյ պատերազմի դաժան տարիներուն միսիթարանքի ու լաւատեսութեան իր խօսքերուն վկան եղած եմ: Ան տեսաբար ներկայ էր Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցի: Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Մեր լաւագոյն վկայութիւնը պիտի ըլլայ հաստատել այն իրողութիւնը, որ Վերժին իր ամբողջ կեանքը նուիրեց իր շրջապատին, իր ընտանիքին, մեծին, փոքրին եւ հանգչեցաւ խաղաղութեան մէջ:

Հարագատները կը վկայեն, որ Ամմէն իր կեանքի վերջին Կիրակին կըրկին այցելեց եկեղեցի, եկեղեցական պարտքը կատարեց ու ըստայնմ խաղաղութեան մէջ հոգին աւանդեց:

Ամմէին առաքելութիւնը շարունակութիւնն է այն գերդաստանին որ ծաղկեցաւ, աճեցաւ ու ծառայեց ազգին: Եկած ենք միասնաբար աղօթելու եւ իր հոգիին խաղաղութիւն եւ հանգիստ խնդրելու: Վերժինը իր ընտանիքն ու շրջապատը շատ սիրեց ու իր ամբողջ ջերմութիւնը տուաւ անոնց, թող Տերը լոյսերու մէջ հանգչեցնէ իր հոգին: Այս պահուն սրտի պարտք ունիմ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ցաւակցական խօսքը եւ օրհնութիւնը տալու Յակոբեան ընտանիքի բոլոր անդամներուն: Այս ընտանիքին գաւակը Նաեւ Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ է, ուստի Կեդր. Վարչութեան Կրօնական եւ Զաղաքական ժողովներուն անունով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ամբողջ միաբանութեան անունով ցաւակցութիւն կը յայտնեմ հանգուցեալի ընտանիքին: Կ'ուզեմ առանձնացնել յատկապէս Տաթև Սրբազանը, Սուրեն Սրբազանը եւ բոլոր այն եկեղեցականները, որոնք Սուրիոյ մէջ ծառայեցին, Հալէպի եւ Ճեզիրէի մէջ ծառայեցին եւ ճանչցան գինք, վայելեցին անոր հոգատարութիւնը, մտերմութիւնը, ջերմութիւնն ու սերը:

Թող Տերը ընդունի իր հոգին եւ խաղաղութեան մէջ պահէ ու պահպանէ գայն իմա եւ յաւիտեանս ամէն:


Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի: Ամէն:



### ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Յակոբեան ընտանիքը իր հարագատին՝

### ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՎԵՐԺԻՆ ՅԱԿՈԲԵԱՆԻ (ԱՄՄԷԻ)



Հիշումին եւ յուղարկաւորութեան տխուր առիթով երախտագիտութիւն կը յայտնէ:

- ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին,
- Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանին,
- Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Եպս. Ազգարեանին,
- Ազգային Կեդրոնական Վարչութեան, Միաբանութեան,
- ՀՀ Սարդասիրական Խումբի Ներկայացուցիչին,
- Թեմի Դոգեւորական Դասուն,
- Ազգային Իշխանութեան,
- Արհի. Տ. Պետրոս Սրբ. Արք. Միրիաթեանին,
- Վերապատուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեանին,
- Պատկան Մարմինին,
- ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան,
- ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան եւ ՀՄԸՄ-ի ընտանիքին,
- ՍՕ Խաչի Շրջանային Վարչութեան, «Անի» Մասնաճիւղի Վարչութեան,
- Տարածակերտի Հայրենակցական Միութեան եւ բոլոր անոնց, որոնք մասնակից դարձան իրենց հարագատին մահուան սուգին:

Գանգուցեալի քառասունցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 26 Նոյեմբեր 2023-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի, Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սայիպէ -Հալէպ: Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին «Աղբալեան» սրահը:

# Թուրքիոյ նուրջ

## ԷՐՏՈՂԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԿՈՉ ՈՒՂՂԱԾ Է ԻՐ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ ԴՐԱՅԻՆԵՐՈՒ ՀԵՏ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԵՉ ՓՆՏՈՒՆ

Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայյիպ Էրտողան կոչ ուղղած է Հայաստանին իր ապահովութիւնը փնտռել դրացիներու հետ համագործակցութեան մէջ, եւ ոչ թէ հազարաւոր քիլոմէթրեր հեռու: Ինչպէս կը գրէ Անատոլու գործակալութիւնը, Թուրքիոյ ղեկավարը այս միտքը արտայայտած է 20 Նոյեմբերին կառավարութեան նիստէն ետք ժողովուրդին ուղղած իր ուղերձին մէջ:



«Արեւմտեան որոշ գերտերութիւններ մինչեւ այս պահը չեն գիտակցիր, որ ԼՂ պատերազմէն սկսեալ՝ մեր տարածաշրջանին մէջ Նոր դարաշրջան կը բացուի: Հայ ժողովուրդին ու անոր ղեկավարներուն համար լաւ կ'ըլլար ապահովութիւն փրկուել ոչ թէ հազարաւոր քիլոմէթրեր հեռու, այլ դրացի երկիրներու հետ խաղաղութեան ու համագործակցութեան մէջ», ըսած է ան:

Թուրքիոյ առաջնորդը ընդգծած է, որ Արեւմտեան երկիրներու կողմէ որկուած գէնքն ու գինամթերքը չեն կրնար կայուն խաղաղութիւն ապահովել: Ան նաեւ կոչ ուղղած է Հայաստանին սեղմելու Ատրպէյճանի մեկնած «բարեկամութեան ձեռքը»:

## ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԵՉ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՆ «ՉԱՆԳԵՉՈՒՐԻ ՄԻՋԱՆՃՔԻ» ԲԱՅՈՒՄԻՆ

Ատրպէյճան կը շարունակէ նախապատրաստուիլ «Չանգեզուրի միջանցքի» բացումին, կարծեք թէ ոչինչ եղած է մինչեւ օրս:

«Ատրպէյճանի կառավարութիւնը կ'աշխատի Չանգեզուրի միջանցքը շահագործման յանձնելու գծով. այս գործընթացներուն կը մասնակցի նաեւ Մաքսային պետական կոմիտէն (ՄՊԿ): Այժմ մենք կ'աշխատենք Չանգեզուրի միջանցքի անցակէտերուն վրայ», լրագրողներուն յայտնած է պետական մաքսային կոմիտէի նախագահ Շահին Բադիրով, համաձայն ԱՊԱ-ի:



«Մենք միաժամանակ կ'աշխատենք Նոր նախագիծերու վրայ, եւ յաջորդ փուլին կը սկսին շինարարական աշխատանքները», անելուցած է Բադիրով:

«Չանգեզուրի միջանցքը» կը վերաբերի Հայաստանի տարածքով անցնող մէկ, կամ անելի ճիշդ, երկու երթուղիի՝ երկաթուղային եւ ճանապարհային: Երեւան կտրականապէս իր մերժումը յայտարարած է «միջանցքային տրամաբանութեան» տրամաբանութեամբ որեւէ մօտեցումի գծով եւ կը մերժէ հաղորդակցութիւններուն արտատարածքային կարգավիճակ տալու իւրաքանչիւր փորձ: Պաքու համառօրէն կը շարունակէ հաղորդակցութիւնները «միջանցք» անուանել, թէեւ այս երկրի նախագահին մակարդակով թոյլ փորձեր կատարուած են ճամբաներու նկատմամբ Հայաստանի ինքնիշխանութեան մասին խօսելու:

### ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Հայ Ծերանոցը կարիքը ունի մաքրութեան պաշտօնէայի, գիշերապահի եւ խոհարարապետի:

Յանելեալ մանրամասնութեան համար դիմել հետեւեալ թիւերուն՝ 4616168 - 0933 057818:

www.kantsasar.com

www.kantsasar.com

www.kantsasar.com

## ՀԷՅ... ՄԵԿԸ ՄԵՌԱՒ



Սեան Ա. Մանճիկեան

Քեսապի մէջ եկեղեցիներու գանգերուն դողանքը այնքան յստակ ու հաճելի կը լսուի, յատկապէս գարնան ու աշնան պարզ օրերուն:

Գարնան թռչուններուն ճլվղոցին հետ պահ մը կը վերանսա. անոնց ձայները լսելով հոգեկան աշխարհը կը խայտայ: Աշնան դեղնած ու գունտած սրճագոյնի երանգներով գետին թափած տերեւներուն եւ հովին միատեղ խաղին, խշխշոցին ձայները միախառնուելով կը հասնին ականջիդ ու սրբտիր:

Ամրան ժխորին եւ խճողումին, ինքնաշարժներու ձայներուն եւ մարդոց բարձրացուցած աղմուկին մէջ, դողանքին ձայնը կարծեք կը մեղմանայ: Մինչ ձմրան, երբ պաղէն պատսպարուելու համար դուռ ու պատուհան գոցած կը նստինք,, վառարանի ճարճատիւնին կը միանան անձրեւին ու որոտումին ձայները ու դժուար կ'ըլլայ դողանքին ձայնը վայելել:

Քեսապցիք երեք համայնքներու գանգերուն դողանքը կը գանազ անեն իրենց թրթռացումներէն: Անոնց գանգերը կը հնչեն ամէն Կիրակի, տօնական օրերուն, պսակներուն եւ կամ համայնքապետներու այցելութեան ուրախ առիթներով:



Աւելի վաղ ժամանակէ եկած սովորութիւն մըն ալ, որ մինչեւ այսօր կը պահպանուի, դպրոցական օրերուն, առաւօտեան ժամը 7:00-ին, եկեղեցիներու գանգերուն դողանքէն է: Արդեօ՞ք այդ սովորութիւնը յառաջացած է ժամանակին շատերուն մօտ ժամացոյցի չգոյութեան հետեւանքով...

Եկեղեցիներու գանգերուն դողանքը վերոյիշեալ առիթներով հնչելու կողքին մահուան բօթը փոխանցելու եւս կը ծառայէ: Մահացողը, ո՞ր համայնքին ալ պատկանի, այդ համայնքի եկեղեցու գանգը տռեակ կշռոյթով կը դողանքէ (իրար յաջորդող հերթական երեք հարուածներով): Այլ խօսքով՝ Քեսապի մէջ մինչեւ այսօր մահագող չի գործածուիր մահուան գոյժը տարածելու համար: Մարդիկ եկեղեցու «կտրուկ գանգով» կ'իմանան, իսկ բօթը կայծակի արագութեամբ կը տարածուի: Անցեալին եթէ գլուխդ պատռեցամէն կամ պատուհանէն երկարեիր ու որեւէ անցորդի հարցնէիր, կ'իմանայիր մահացողին ով ըլլալը: Իսկ այսօր, ընկերային ցանցը լուրերը արագօրէն փոխանցելու միջոց դարձած է:

Ծերուն նախակրթարանի երկրորդ դասարանի աշակերտ էր: Դասացոյցը ձեռքը առած, յաջորդ օրուան դասերը կը ստուգէր մօրը օգնութեամբ, իսկ աւարտած դասի գիրքն ու տետրակը դպրոցական պայուսակին մէջ կը տեղաւորէր: Առաջին երկու դասապահերուն դասերը հազիւ աւարտած, եկեղեցու գանգը կտրուկ երեք անգամ կը դողանքէ ու դողանքը երկար ժամանակ կը կրկնուի:

Երբ «կտրուկ գանգը» երկար հնչէր՝ մահացողը երիտասարդ կ'ըլլար, իսկ եթէ քանի մը անգամ միայն կրկնուէր, մահացողը Քեսապէն դուրս բնակող քեսապցի մը կ'ըլլար:

Ծերունին մայրը ականջները սրած մտիկ կ'ըներ եկեղեցու գանգին դողանքը, ինք ալ մօր հետեւելով պահ մը լուր մտիկ ընելէ ետք գանգին դողանքը կը բացագանչէ:

– Դէ՛յ... մէկը մեռաւ:

– Ծերո՞ն, տղա՛ս, ինչո՞ւ այս ուրախ բացագանչութիւնը, կը հարցնէ մայրը զարմացած:

– Մա՛մ, վաղը կրօնի գրաւոր ունինք, հիմա մէկը մեռաւ, ուրեմն վաղուան գրաւորը յետաձգուեցաւ:

Մայրը թաքուն ժպիտով դիտեց իր անմեղ փոքրիկին ուրախութիւնը: Ան տակաւին մահուան իմաստն իսկ չէր ըմբռնած, սակայն շատ լաւ գիտէր, որ եթէ գիւղին մէջ մահ պատահէր, յաջորդ օր կրօնի պահը չէղեալ կը համարուէր, որովհետեւ Քեսապի մէջ կրօնի դասապահերը կը վերապահուէին գիւղին հոգեւոր հովիւին: Ուստի, եթէ գիւղին մէջ մէկը մահանար, հոգեւոր հովիւը անկասկած թաղման արարողութեան ներկայ պիտի ըլլար:

«Եաշխօքը Չուճօխ Պըր Ընուս» (Աշխարհին մէջ երեխայ պիտի ըլլաս), կը մտածէր մայրը: Երեխային համար միայն դասապահի մը չէղեալ համարուիլը ուրախութիւն կրնար առթել, նոյնիսկ եթէ ան կարողութիւն չունենար ուրախութիւնն ու տխրութիւնը, կեանքն ու մահը գանազ անելու եւ դասապահի մը չէղեալ նկատուելուն համար այդքան զուարճանար:

## Պրիմալիտ

### ՅՈՒՇ, ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ, ՀԱՆԳԻՊՈՒՄ Տոբթ. Մ. ՏԱՐԱԳՃԵԱՆ արուեստագետին հետ



Մարուշ Երամեան



Չարմանալի բան է յիշողութիւնը, որ տարօրինակ կերպով ինքզինք կը գագսնէ եւ մէջտեղ կ'ելլէ այնպիսի ճամբաներէ, որոնց գոյութեան չենք կասկածիր իսկ:

Արամ Խաչատրեանի թանգարանն են. այժօս կը գարնէ փոքրիկ քանդակ մը, իր պատուանդանին վրայ. գեղեցիկ է, անսովոր, քանի մը «գիծերով» ամբողջացած եւ խորունկ:

Կը գրաւէ գիս անհասկնալի ձեւով. կը մօտենամ, կը կենամ անոր առջեւ, կը դիտեմ... Ի՞նչ կը յիշեմ. կը յիշեմ, այդ իսկ յստակ չէ. բայց բան մը այս քանդակին մէջէն կը կապէ գիս իմ անցեալի օրերուս, Զարէն Եփփէ ճեմարանին...

Երբ շփոթս կը շարունակուի, նոր կը մտածեմ կարդալ քանդակագործին անունը՝ Մկրտիչ Տարագճեան:

Անմիջապէս կը պատկերանայ այժօս բարձր դասարանի այդ լուռ եւ ծանրախոհ աշակերտը, որ իր շուքը կը պարտադրէր բոլորին, առանց ճիգի, պարզապէս ինքզինք ըլլալով:

Այո՛, շատ լաւ կը յիշեմ, երբ պաքալորիայի արդիւնքները ելան, բոլորս շշմեցնէին իր ասպիտակած գունարով:

–Որոշեր է բժիշկ ըլլալ...

Եւ անշուշտ եղա՛ւ:

Գիտեի՞ որ իր լուռ տիեզերքին մէջ այդքա՛ն արուեստագետ է այդ աշակերտը. նոյնիսկ չեմ գիտեր, թէ արդեօ՞ք մեր դպրոցական ցուցահանդէսներուն իր գործերը կը ցուցադրուէին: Չեմ յիշեր, բայց զգացողութիւնը այս առաջին քանդակէն, շատ զօրեղ է:

Իր այս քանդակը – յետոյ մնացեալներն ալ նոյն տպաւորութիւնը պիտի ձգէին վրաս – ծանօթ եւ մտերիմ էր ինծի: Առեղծուած մը, որ շատ չհասկցայ, բայց աստիկա արգելք չէրաւ որ վայելեմ քանդակը, յետոյ մնացեալները, փնտռեմ արուեստագետ բժիշկին գործերը եւ փորձեմ հասկնալ անոնց խորքը:

Տարագճեանի քանդակները, պարապուրթներու օգտագործումով, կը յիշեցնեն երաժշտութեան մէջ լռութեան պահերու օգտագործումը. այս երկուքը՝ պարապուրթներն ու լռութիւնը, ներկայացուած գործը՝ քանդակ թէ երաժշտութիւն, կը դարձնեն աւելի ցայտուն, ըսելիքը կը դարձնեն աւելի լսելի:

Քանդակները նաեւ հանգիստութիւններ ունին երաժշտութեան հետ, որուն ձայները միջոցին մէջ կը թեւածեն. Տարագճեանի քանդակները եւս թանձրութիւն չունին, այլ կը թեւածեն միջոցին մէջ, հաստատօրէն նստած ըլլալով իրենց պատուանդաններուն վրայ: Ասիկա ըսուած չէ անշուշտ դիմաքանդակներուն եւ կիսանդրիներուն համար:

Մարդկային կեանքին ամենէն խորքային հարցերն ու ցաւերը իրենց արտայայտութիւնը գտած են Տարագճեանի քանդակներուն մէջ. նուազագոյնով առաւելագոյնը ըսելու – ճիշդ արուեստագետին խառնուածքին նման սակաւախօս – գաղտնիքը գեղեցկօրէն բացայայտուած

կը գտնենք այդ գործերուն մէջ:

Տարագճեանի գործերը գլխաւոր երկու առանցք ունին՝ կիսանդրիներն ու մնացեալը: Կիսանդրիները ընդհանրապէս նշանաւոր հայ դեմքեր կը ներկայացնեն, ինչպէս Ազնաւուր, Ա. Խաչատրեան, Ալան Յովհաննէս (Երգահան), Արմէն Գարօ, Արշիլ Կորքի, Արամ Մանուկեան, Ուիլիլմ Սարոյեան, Կոմիտաս, Եւսէֆ Զարչ, Պարոյր Սեւակ, Եղիշէ Չարեց, Յակոբ Օջական, Սայաթ Նովա, Դանիէլ Վարուժան, Զրանդ Տիկը եւ այլ հայ թէ օտար դեմքեր:

Մնացեալը շեշտուածօրէն գեղագիտական գործեր են, որոնց հիմքը մարդկային ցաւն է, այս պատճառով ալ անոնք կը «խօսին» թէ՛ հայ, թէ՛ օտար ակնդիրին: Այդ գործերը կը կրեն գիրենք բացայայտող անուններ, ինչպէս Առաջնորդը, Սեւեռել Զորիգոնը, Ընթերցողը, Ձգողութեան Ասպարէզ Կարդալ, Ազատութիւն, Սպասելով Մուսային, Աղետ, Սոնաթա, Կախարդական Սրինգ, Անկախում, Թակարդում, Արդարութեան Պահանջ եւ այլն:



Քանդակներուն միջոցը ընդհանրապէս պրոնզ է (95% պրիմալ եւ 5% անագ), երբեմն նաեւ աւելի այժմեական նիւթերու օգտագործումով:

Տարագճեանի գործերը տարածուած են Ամերիկա, Քանադա եւ Զայաստան, յաճախ հանրային վայրերու մէջ գեղեցուած:

«Արուեստի գործի մը գլխաւոր նպատակն է յուզել միտքը եւ շարժել հոգին» ըսուած է:

Տարագճեանի քանդակները այս երկուքն ալ կ'ընեն՝ կը շարժեն հոգին եւ կը յուզեն միտքը, ստիպելով որ անոնց գեղագիտութեամբ չգոհանայ ընթերցողը, այլ այս քանդակներուն միջոցով մտնէ ինքն իր եութեան խորքը եւ հոն փնտռէ ներկայացուած հարցադրումներուն պատասխանները:

Տարագճեան արժանացած է բազմաթիւ մրցանակներու, որոնցմէ կրնանք յիշել Նախագահական շքանշան, Զայաստան 2018-ին, Նարեկացի շքանշան, Զայաստանի Մշակոյթի Նախարարութիւն 2015-ին եւ այլն:

Զանդիպումի փախցուած առիթի մը փոխարէն, հեռակայ գրոյցով կը կապուիք յարգելի բժիշկին եւ սիրելի արուեստագետին հետ:

#### 1. Ժամանակի առումով՝ ինչպէ՞ս կը ներդաշնակուին արուեստագետն ու բժիշկը:

Թե՛ւ շատ փոքր տարիքէս արուեստի հանդէպ հետաքրքրութիւն ունեի, բայց երկրորդականի աւարտին գիտական մասնագիտութեան հետեւիլ որոշեցի: Ուսումնական տարիները եւ անոր հետեւած ինքնահաստատման շրջանը, նկատի առնելով նոր երկրի մը ասպարէզը ծայ-

րեն սկսելու պարտաւորութիւնը, թույլ չտուին արուեստով զբաղելու:

Շուրջ 25 տարի առաջ որոշեցի կանոնաւորապէս ազատ ժամեր գտնել ստեղծագործելու: Նախ՝ նկարչութեան եւ ապա քանդակագործութեան:

Վերջին տարիներուն շաբթուան 4 օրերը բժշկութիւն կ'ընեմ, իսկ մնացեալը, ներառեալ շաբաթավերջը, արուեստի կը նուիրեմ: Եթէ ձեռքով չեմ աշխատիր՝ մտքով նոր լուծումներ կ'որոնեմ:

#### 2. Տեղի առումով՝ անշուշտ որ արուեստանոց մը ունիք, տա՛ն մէջ, թէ այլ վայրի մը մէջ: Այս հարցումս, կը հասկնաք, կը կապուի երկու մասնագիտութիւններու միահիւսումին, եթէ մօտ չըլլան, ինչպէ՞ս հիւսուին:

Արուեստանոցս տանս մէջ է եւ կ'արտօնէ աշխատիլ ըստ քմայքիս եւ ներշնչումիս:

Բժշկական ծառայութիւնը անշուշտ կը մատուցուի մեր քլինիքէն ներս, գոր կը բաժնեմ տիկնոջս Սալբիին (Յակոբեան) հետ:

#### 3. Ինչպէ՞ս գտաք ձեր ոճը, որ իրապէ՛ս խիստ ինքնուրոյն է:

Տրուած ըլլալով որ արուեստի մասնագիտական ուսում չեմ ստացած, կը ստեղծագործեմ հետեւելով ներքուստ բխած ուղղութեան:

Նախքան համացանցի ընդհանրացումը, լաւագոյն թանգարանները այցելած եւ արուեստի գործերը տեսած եմ: Այսօր արդէն այդ բոլորը համացանցով հասանելի են: Չանոնք ուսումնասիրելով, անոնց թողած տպաւորութիւնը միախառնուելով, ծնունդ կու տայ ուրոյն ոճի մը:

#### 4. Ազդեցութիւններ կրա՞ծ էք որպէս քանդակագործ. որմէ՞:

Զամբաւար քանատահայ քանդակագործ Արթօ Չաքմաքչեան իմ շատ լաւ բարեկամս էր: Ան յաճախ ցուցմունքներ կու տար, յատկապէս թեքնիք տեսակետ: Ի վերջոյ պրոնզի քանդակներ պատրաստելը շատ բարդ եւ երկարատե գործընթաց մըն է: Այսուհանդերձ իմ եւ անոր ոճը բոլորովին տարբեր են:

#### 5. Յաճախած էք Զալեպի Սարեան Ակադեմիան, հոն նախ կը գծէի՞ք, թէ ուղղակի քանդակով սկսաք: Ո՞վ էր քանդակի ձեր ուսուցիչը: Ի՞նչ յուշեր կը պահէք Զալեպի Սարեան Ակադեմիային:

Պետք է խոստովանիմ որ Սարեան Ակադեմիայի անունը սկսած էի նշել սկզբնական շրջա-



նին, որպէսզի մարդիկ աւելի լուրջի առնեն արուեստս: Խորքին մէջ ես ինքնուս քանդակագործ մըն եմ: Ծճողնք որ ինքնուսը անուսի համագործ չէ:

Սարեան Ակադեմիա յաճախած եմ շատ կարճ ժամանակ մը՝ Չարեհ Գափլանի եւ Արսիւն Զօրեանի օրերուն:

Որպէս փոքրիկ տղայ իրենց ուշադրութեան կ'արժանանայի եւ այդքան միայն:

Գրչածեւ ածուխի շերտով խաւաքարտին վրայ կ'ընդօրինակէի դիմացս դրուած գաճէ արծան մը, կլկլակ մը կամ գոյգ մը գիւղական տրեխներ: Սխալ գիծերը սրբելու համար կը գործածէիք հացի (սոմունի) միջուկը: Ամեն շաբաթ գիս

## «ՄԱՏՆԱՀԵՏՔԵՐ» Հեղինակ՝ Պերճուհի Ալեքսանյան

Ամեն անգամ, երբ հայերեն լեզուով գիրք մը կը հրատարակուի (անշուշտ եթե տեղեկ ըլլամ-կամ հատորը՝ ստացած), իմ կողմէ համեստօրէն եւ անկեղծ մօտեցումով, ջերմ գնահատանքի տողերով կը փորձեմ անոր անդրադառնալ:

Կը սիրեմ խանդավառուիլ: Ալեյի ճիշդ՝ միշտ նոր գիրքը դիմաւորած եմ խանդավառութեամբ:

Ու նորութիւն մը չէ, երբ անցնեմ, որ հայ գիրքի ծնունդն ու իմ գրասեղանին անոր ներկայութիւնը զիս իսկապէս կը վերապրեցնեն: Որովհետեւ հաւատարմօք, հայ գրականութեան տաճարին մէջ իւրաքանչիւր «լոյս», ոչ միայն ինձի, այլեւ բոլոր մշակութասէր հայորդիներուն համար, կը կարծեմ որ մեծապէս ողջունելի է: Ալեյին՝ հայ երկի մը հրապարակ գալը, արձակ կամ բանաստեղծութիւն, ուրախալի եւ յոյս ներշնչող երեւոյթ այլ է:



Պարզապէս կ'ուզեմ նաեւ յիշեցնել, թէ հատորի մը լոյս ընծայումը անիմաստ պիտի ըլլայ, եթէ չմտածուի գայն ընթացողին յանձնելու մասին: Ու այս պարագային, ընթացողը հաղորդակից դարձնելու համար՝ ներկայացնեմ հեղինակը:

Նախ հարարօրէն եւ մտերմաբար ըսեմ, որ հեղինակ Պերճուհի Ալեքսանյան եղած էր ճեմարանի լաւագոյն աշակերտուհիներէ մէկը: Թեւ Յալեայի երկրաչափական համալսարանի շինարարական ճիւղէն վկայուած է, սակայն հայ լեզուին, հայ գիրքին ու հայ գրականութեան հանդէպ ունեցած իր սերը գիւնք առաջնորդած է հայ գրիչ մը դառնալու կոչումին:

Իբրեւ հաստատուն վկայ... ահա՛ հեղինակ Ալեքսանյանի «ՄԱՏՆԱՀԵՏՔԵՐ»-ը:

Հատորի կողքին վրայ կը կարդանք. «Հրատարակութիւն Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի Թիւ 103-Անթիլիաս-2021», իսկ կողքի ետեւի բաժինին՝ հեղինակին ինքնակենսագրութիւնը:

258 էջերէ կազմուած սոյն հատորը բաժնուած է չորս մասերու, որոնք վարը նշեալ խորագրերու տակ, գանազան պատմուածքներով եւ յօդուածներով ամբողջացած են: Այսպէս.

- 1-Պատերազմական Մթնոլորտ- (8 պատմուածք)
- 2-Հրապարագրական - (4)
- 3-Գեղարուեստական - (16)
- 4-Երգիծական - (4)

Հատորը, որ լոյս տեսած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանէն-(Անթիլիաս-Լիբանան), խմբագրած է հանրածանօթ մտաւորական Կարո Յովհաննեսեան: Իսկ հատորի վերջին բաժինին, առ ի տեղեկութիւն, 3 էջերով ներկայացուած է «Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ»-ի իրարայայտող հրատարակութիւնները:

Խորքին մէջ տեսանելի, զգացական եւ նոյնքան ալ դժբախտ իրողութիւններու համադրում մըն է «ՄԱՏՆԱՀԵՏՔԵՐ»-ը, որ նաեւ հեղինակին երրորդ հատորը կը նկատուի, «Կտակը»-էն (1994) եւ «Միս Եփփէ Մայրիկը»-էն (2006) ետք:

Գրող Ալեքսանյան սոյն հատորով 2011-2020 տարիներուն վրայ երկարող Յալեայի եւ Երեւանի մէջ իր անցուցած, ապրած, կրած, տառապած ու մահաւանդ Սուրիոյ քաղաքացիական պատերազմի օրերու սարսափին տակ մնացած իր մտածումներն ու զգացումները, ապրումներն ու ներշնչումները իւրայատուկ ձեւով եւ պիտակով դրսեւորած է, առաւել հայրենիք հաստատուելէ ետք, սփիւռքահայու կարօտի եւ յուսալքաբութեան իր մտորումները թուղթին յանձնելով այս հատորին հարազատօրէն ծնունդ տուած է:

Եւ երբ կը կարդաս անոր «Կար ու Չկայ»-ն (էջ 25), կը զգաս ու կը հասկնաս Յալեայի մէջ սուրիական պատերազմի այդ տարիներու ահռելիութիւնն ու ողբերգութիւնը, որոնք մեծապէս եւ զգալիօրէն ցնցած էին իր եւ իր ընտանիքին ամբողջ Երեւանը եւ տանջած իր միտքն ու հոգին:

Այս բոլորին համար հեղինակը լայն բանալով իր էջերը, շատ յաջող կերպով կրցած է խորունկ ու ցաւալի տողերով, հաղորդական շունչով եւ նոյնքան ալ ազգային արեւմտութիւններով ու երազանքներով ներկայացնել իր ապրումները:

Հատորին մէջ էջեր կան, որոնք ուղղակի սրտիդ կ'իջնեն, որովհետեւ այդ էջերը եղած են յարատեւ տագնապի մը երգը, տրտմութեամբ թաթախուած: Էջեր, որոնք հայասիրտ տրոփումով ընթերցողը հաղորդակից կը դարձնեն հեղինակի մտքի թափառումներուն:

Յաջող արձակով հրամցուած նաեւ իր բոլոր տողերուն վրայ նշմարելի է Պերճուհի Ալեքսանյանի հարազատ եւ իմաստալից շունչը՝ համեղ ոճով, պարզ եւ թարմ զգացումներով եւ գրելու մտերիմ ձեւով հրամցուած:

Կան հարազատ պատկերներով ներկայացուած վիճակներ, պահեր, սարսափի ու վախի ազդեցութեան տակ հասկնալի ու յաճախ ալ սրտաճըմլիկ, ինքնատիպ, զգայուն, ու մահաւանդ սրտի մօտիկ տողերով էջեր:

Իբրեւ համեստ ընթերցող, ինձի համար այս հատորը, ալեյի ճիշդ բազմաշերտ պատկերներու մէջ ամփոփուած այս գիրքը, երբ ընթերցեցի, իր տեսակին մէջ իբրեւ իւրայատուկ հատոր, եկայ կրկին անգամ հաստատելու, թէ այսօրուան գրողին նիւթը իրապէս որ մարդու ներաշխարհն է: Նոյնիսկ այդպէս պետք է որ ըլլայ:

Հատորին մէջ դրսեւորուած տագնապներն ու անոնցմէ բխող անկաշկանդ ու հաւասարակշռուած պոռթկումներն ու ապրումները ալեյի կը պըրկեն ընթերցողին հոգեվիճակները: Հոն հարազատօրէն տեղ գտած բոլոր պատմուածքներն ու յօդուածները, օրագրութիւն կամ պարզ ձեւով ներկայացուած գրութիւնները կը ներկայացնեն խոհեմ համոզումներ, կեցուածքներ, հայ կեանքին հետ առնչուող հիմնական երեւոյթներու մասին ստեղծագործ գրիչով եւ վերլուծող նկարագրող իր տողերով:

Անկեղծօրէն նաեւ ըսեմ, որ Պերճուհի Ալեքսանյան մեր այս գրիչը, բոլորովին անծանօթ դեմք մը չէ Սփիւռքին ու նաեւ հայրենիքին ալ: Ան մտածող միտք մը ըլլալով հանդերձ, լաւ դիտող մըն է, եւ ունի իր հաստատ համոզումներն ու տեսակետները: Իր միտքը կ'արտայայտէ իւրայատուկ ձեւով, դատելու ճշգրիտ առաքելութեամբ, սովորական եւ ընթացիկ եզրակացութիւններէ վեր՝ համարձակ ու անշահախնդիր ակնոցով, իրապաշտ եւ կենդանի ու գրաւիչ վրձնով, էջերուն տալով խորք եւ տաքութիւն:

Այս հատորով Ալեքսանյան դիտելու եւ վերլուծելու իր տաղանդով մեր դիմաց բացած է նոր ուղի մը, նոր պատկերներով ճիւղացած, հասկնալի ու սրտի մօտիկ:

Արդ, այս առիթով, լեցուն թըրով անկեղծ գնահատանքներուս, բարեմաղթութիւններուս ու շնորհաւորանքներուս կողքին, յարատեւութեան մաղթանքներս ալ մեր այս հեղինակին կը փոխանցեմ, յուսալով եւ միաժամանակ թելադրելով, որ իր գրիչը դալար պահէ եւ շարունակէ հայ գրականութեան անդաստանին մէջ կատարել իր արդար վար ու ցանը:

Վարձքը կատար, Մտերմութեան բանակի կամաւոր գիտնորագրեալ գրիչ, սիրելի ու յարգելի աշակերտուհիս՝ Պերճուհի՛ Ալեքսանյան: Ապրի՛ս:

**Գեորգ Պետիկեան**

## ՅՈՒՇ, ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ,...

Սկիզբ՝ էջ 7

դասի տանող, ինձմէ տարեց գարմիկիս՝ Գեորգին հետ, պետք էր կանգ առնելիք Պապ ալ-Ֆարաճի հայ փռագրական մօտ՝ գնելու համար թարմ, փոքրիկ պակէթ, որուն բոլոր անդիմադրելի էր. դասը չաւարտած արդէն զայն խած-խած կերած կ'ըլլայի:

**6. Ձեր արուեստին մասին եղած գրութիւններէն մեկուն մէջ ըսուած է. «Մարմինները կը կրեն ... չգարդարուած գեղեցկութիւն, որ կը սնանկ էրոսի եւ վախի մէջ»: Թերեւս վախը հասկնալի է, որովհետեւ վերջին տասնամեակներուն բոլոր ալ այս կամ այն չափով վախի մէջ կ'ապրինք. բայց ի՞նչ կ'ըսէք էրոսի մասին, դուք դրա՞ծ էք ատիկա ձեր քանդակներուն մէջ:**

Կիրքը եւ վախը բնագոյնին են եւ միշտ մաս կազմած են մարդ արարածի էութեան: Երկուքն ալ մարդկութեան գոյատեւման եւ վերարտադրման գրաւականներ են, ուստի շատ բնական է որ անոնք արտացոլուին արուեստի մէջ:

**7. Դուք ձեզ սիրո՞ղ, թե՞ մասնագէտ քանդակագործ կը համարէք ինչո՞ւ:**

Յաճախ կը նշուի թէ արհեստավարժ (professional) արուեստագետը այն է, որ արուեստով իր ապրուստը կ'ապահովէ: Այդ տրամաբանութեամբ՝ Վերնիսաժի նման կրպակներուն մէջ իրենց գործերը վաճառողները արուեստավարժ են:

Իմ պարագաս այդ չէ: Գործերս յաճախ կը վաճառեմ, բայց հաստատութիւններու, թանգարաններու եւ հանրային վայրերու գործերուն համար գումար չեմ գանձեր: Հայաստանի մէջ 12 թանգարաններու եւ հաստատութիւններու մէջ տեղադրուած գործերս նուիրուած են: Զանաւոր մէջ արդէն 4-րդ յուշարձանս պատրաստ է Օթթաուայի մէջ Մայիս ամսուն տեղադրուելու համար: Կ'ենթադրեմ որ արուեստս սիրողական կարելի չէ անուանել:

**8- Վերջերս այցելեցիք Եգիպտոս, ուր հնագիտական կոթողները մեծամասնութեամբ արձաններ են, մահաւանդ Լուքսոր-Ասուանի շրջանը: Ի՞նչ էր ձեր տպաւորութիւնը եւ տարածքը կրցա՞ւ ներշնչել ձեզ:**

Եգիպտոս այցելութիւնս միայն զբօսաշրջութիւն չէր, այլ հազարամեակներու վաղեմութիւն ունեցող մշակոյթը ուսումնասիրել էր:

Հակառակ որ միշտ պատկերները տեսած ենք, բայց կը շշմիս երբ դեմ յանդիման կը գտնուիս այդ կոթողային ճարտարապետութեան եւ քանդակագործութեան: Թանգարանին մէջի դիմաքանդակները հազարամեակներու խորքէն նայելով կարծես քեզի բան մը ըսել կ'ուզեն:

Փառաւունքներու խորափոր գերեզմաններու սրահներուն որմնակարները տակաւին կը պահեն իրենց խայտաբղետ գոյները: Չարմնալին այն է, որ անոնք ստեղծուած են առյուծաթէ պղնձ եւ անտեսանելի մսալու համար, առ ի յաւերժացում հանգուցեալի հոգիին: Այսօր անոնք լոյս աշխարհ բերուելով, փառաւունքներուն անմահաւանդութիւնը իրականացած կ'ըլլայ, հոգ չէ թէ իրենց երեւակայածն տարբեր ձեւով:



## ՃԱՆՉԱԿՆԵՐ ԲԱՌԵՐԸ (2)

Արմենակ Եղիայեան

### 1. Փուշման

Աւելի քան քսան տարի առաջ էր:

Աթոռիս վրայ ունէի երիտասարդ հիւանդ մը. մէկ կողմէ կը դարմանէի զինք, միւս կողմէ կը գրուցէիք. շատ աւելի ես էի խօսողը, իսկ ինք երբեմն առիթ կը գտներ կցկտուր բառեր արտասանելու, երբ յանկարծ ըսաւ.

-Փուշման եղայ...

Իսկոյն սաստեցի՝ ընթացք տալով քնազդական մաքրամոլութեան մը.

-Պետք չէ փուշման ըսես... թրքերէն է...

Խօսակիցս անակնկալի եկաւ, յօնքերը պոստեց, շեշտակի նայեցաւ ու ապա՝

-Ինչպէ՞ս թրքերէն կ'ըլլայ,- հակադարձեց անզօր,- ամբողջ կեանքս

փուշման ըսած եմ ու փուշման լսած եմ, եւ ոչ մէկը նկատողութիւն ըրած է. իսկ հայերէնը ի՞նչ է:

-Չղջալ է. զղջացի-զղջացի-զղջաց...

-Չա՛րմանալի, ասանկ բա՞ռ ունի եղեր հայերէնը...

\*\*\*

Եթէ մանկութեանս, ուր ես ու շրջապատս ալ փուշման ըլլալ կ'ըսէինք, ուրիշ մը ինծի ըներ նման դիտողութիւն մը, ապա ինքս ալ զարմացած պիտի հակադարձէի, թէ հապա ի՞նչ է հայերէնը, քանի պուրճիամուտցին ուրիշ բառ չէր ճանչնար:



Մերը ամենահայախօս ընտանիքներէն էր, որ այդ օրերուն կարելի ըլլար երեւակայել. չեմ յիշեր օր մ'օրանց մէկ թրքերէն նախադասութիւն ուղղած ըլլալ մօրս, մեծ մօրս ու մանաւանդ իմ: Այս նոյն կացութեան մէջ մօտաւորապէս գտնուած եմ չորս եղբայր-քոյրերս ալ, սակայն հակառակ ասոր՝ ունէինք թրքերէն բառամթերքի մեր կայուն օժիտը, որ բոլորովին բնական ձեւով կը կիրարկէինք՝ առանց իսկապէս ծանօթ ըլլալու անոր ծագումին:

Բաւական ուշ է, որ կամաց-կամաց սկսանք բոլորովին «հայանալ» եւ մեր բարբերուն մէջ ի շարս այլոց մտաւ զղջալը եւս:

Իսկ փուշման ըլլալը...

Իմ առաջին թիրախներս այնուհետեւ եղան հեզ արեւելահայերը, երբ 1965-ին առաջին անգամ ոտք դրի Յայաստան, ուր ազատօրէն եւ մեծով ու պզտիկով կը կիրարկէին անոր քիչ մը սրբացած ձեւը՝ փոշմանէլ...

Մեծագոյն անակնկալը, սակայն, վերապահուած էր քիչ մը աւելի ուշ ժամանակներու, երբ «Արմատական»-ն ու «Նոր հայկազեան»-ը լոյս տեսան եւ սկսան կամաց-կամաց թափանցել մեր կեանքին մէջ. ես առաջիններէն եղայ երկուքական օրինակ գնողը. կը մտածէի՝ մէկը անդրանիկ մանչիս, միւսն ալ՝ կրտսերին համար, թէեւ աւելի ուշ հաշիւներս «խանգարուեցան», եւ այս անգամ պետք եղաւ չորսական օրինակ գնել:

Եւ այստեղ ալ զարմանքով տեսայ... ինչե՞ր ու ինչե՞ր տեսայ:

Ուրեմն, ըստ Աճառեանի՝ բառս ունի պարսկական ծագում:

Կը նշանակէ՝ զղջում, ստրջանք, ապաշաւ, աշխարանք:

Սկզբնապէս ան հայերէն մուտք գործած է մեր առաջին մատենագիրներուն հետ իսկ փաշիման ձեւով. Աճառեան ասով կը թուէ տասնեակ մը մատենագրական վկայութիւններ: Աւելի ուշ ան սկսած է արտասանուիլ փոշիման՝ հենց փոխառու լեզուին՝ պարսկերէնի մէջ, եւ այնուհետեւ մերոնք սկսած են կիրարկել այս վերջինը, որով նմանապէս մէքքերուած են բազմաթիւ օրինակներ, մինչ «Նոր հայկազեան»-ը շատ աւելի ժուժկալ է օրինակներով:

Աւելի ուշ բառս անցած է թրքերէնին փուշման արտասանութեամբ ու գրչութեամբ: Եւ պատահած է հետեւեալը.

-Արեւելահայը պահած է բառիս յարաբերաբար հարազատ ձեւը՝ փոշիման:



## «ՉԱՅ ԱՍՊԵՏ»

Մարիա Բրդոյեան

«Յայ Ասպետ»-ի մրցանակը Յայաստանի պատկերասփիւռէն դիտած էի: Սուրիոյ Պատանեկան Միութեան «Արամ Մանուկեան» մասնաճիւղի Գրական Յանձնախումբը նոյն օրինակին հետեւելով կազմակերպեց միջմասնաճիւղային «Յայ Ասպետ»-ի մրցանակ՝ 20 Յոկտեմբեր 2023-ին Յալէպի Արամ Մանուկեան Ժողովրդային Տան մէջ: Զարցումները շարուած էին



այբբենական կարգով: Մրցումին նպատակն էր պատանիներուն գիտելիքները գարգացնել եւ անոնց ծանօթացնել Յայոց պատմութեան, ՀՅԴ պատմութեան, Յայաստանի աշխարհագրութեան՝ իր գեղեցիկ բնութեամբ, լիճերով ու գետերով, գրականութեան ու արուեստին, այդ մարզերուն մէջ ծառայած նշանաւոր դէմքերու եւ այլն:

Մրցանակին երկրորդ նպատակն էր՝ պատանիներուն ինքնավստահութիւնը բարձրացնել: Չորս խումբերը իրենց լաւագոյնը ներկայացուցին: Ժիւրիներուն եւ անոնց կողմէ տրուած կիշերուն համաձայն ունեցանք յաղթող խումբ մը, նաեւ «հայ ասպետ» մը, որոնք պարգեւատրուեցան: Մասնակիցները հարուստ գիտելիքներով եւ լաւ յիշատակներով վերադարձան իրենց տուները, խոստանալով միշտ հետաքրքրութիւն ցուցաբերել իրենց լեզուին, պատմութեան եւ մշակոյթին հանդէպ:

Փափաքս է, որ նման մրցանակներ յաճախակիօրէն կազմակերպուին, որպէսզի հայ պատանին ներշնչուի հայկական ոգիով:

-Արեւմտահայը ազդուելով թրքերէնէն որդեգրած է փուշման:

Իսկ ի՞նչ է կացութիւնը այսօր:

Թրքերէնը իր գանազան արտայայտութիւններով, այդ, զգալիօրէն նահանջեց մեր լեզուական բարբերէն, սակայն զուգահեռաբար նահանջեց հայութիւնն ալ... Պուրճ Համուտէն, ուր բոլորովին անհետացած չէ տակաւին թրքերէնը, եւ բացառուած չէ մերթ ընդ մերթ հանդիպելու թէ՛ փուշման-ին, թէ՛ ուրիշ շատ բառերու, որքան ալ հետզհետէ նուազին զանոնք արտասանողները:

### 2. Սպանախ եւ... շումին

Սպանախը մէկն էր այն բառերէն, որ համատարած կը կիրարկուէր Պուրճ Համուտի մէջ՝ բնորոշելու համար այնքան տարածուած բանջարեղէնը, որ այդ նոյն անունը կը կրէր տեղացի խանութպաններու լեզուին մէջ եւս: Եւ ոչ ոք, բացարձակապէս ոչ ոք կ'անհանգստանար այդ անուանումով, մինչեւ որ...

Հազիւ եօթ-ութ տարեկան մանուկ էի, երբ ընկերներու հետ կը խաղայի փողոցը, որ մեր բնական խաղավայրն էր, որովհետեւ տուններուն մէջ, որոնք գրեթէ բոլորն ալ օժտուած էին միայն մէկ սենեակով,- որ պարտէր պատսպարել միջին հաշուով 7-8 անդամ,- պարզապէս տեղ չունէինք խաղալու:

Այդ պահուն էր, որ մեզմէ մէկը արտասանեց մեզի համար այնքան բնական ու առօրեայ սպանախ բառը:

Ասոր վրայ՝ երիտասարդ մը, որ կ'անցնէր մեր քովէն, փութաջան մօտեցաւ, ցուցամատը ուղղած մեզի, եւ խստիւ, դուք հասկցե՛ք՝ սպանախից, ազդարարեց.

-Սպանախը թրքերէն է, պետք է ըսել հայերէն՝ շումին:

Շումին... ահա քեզի բառ մը, որ առաջին անգամ կը լսէի(նք) ու անկէ ետք շուքիս պէս հետեւեցաւ ինծի ու կը շարունակէ հետեւիլ՝ ականջիս օղ դարձած: Իսկ Աճառեան կը հաստատէ, որ սպանախ ու շումին հաւասարապէս... պարսկերէն են:

## ԻՆՉ ԿՐՄԵՆ ԱՍՏՂԵՐԸ



**Խոյ**  
Վերջապես պիտի կարենաք լուծել ձեր բոլոր խնդիրները եւ հանգըստանալ: Շաբաթը լի է հաճելի անակնկալներով:



**Ցուլ**  
Ձեր ժրաջան աշխատանքին շնորհիւ պիտի գնահատուիք: Պաշտօնի բարձրացում մը մեծապես պիտի խանդավառէ ձեզ:



**Երկուորեակ**  
Ձեր սիրելիներուն հետ երջանիկ պահեր պիտի ապրիք: Բարեկամներ պիտի հիանան ձեր ստեղծագործություններով: Գնահատանքի պիտի արժանանաք:



**Խեցգետին**  
Երկար աշխատանքէ ետք անհրաժեշտ է հանգստանալ: Կարճ ճամբորդութիւն մը պիտի ծրագրէք ձեր սիրելիին հետ: Հիանալի էք:



**Առիծ**  
Դանդաղ քայլերով կը յառաջանաք, սակայն նորանոր նուաճումներ պիտի արձանագրէք ձեր գործին մէջ: Թշնամիներէն զգուշացէ՛ք:



**Կոյս**  
Չափազանց ինքնավստահ ու բարի էք: Մարդիկ ձեր աջակցութիւնը պիտի խնդրեն: Փութացէ՛ք անոնց օգնութեան: Շաբաթը բարի է:



**Կշիռք**  
Նոր գործի մը առաջարկը պիտի ընդունիք: Մարդոց գովասանքին պիտի արժանանաք ձեր տիպար կեցուածքին համար: Փոքր պարգէ մըն ալ պիտի քաջալերէ ձեզ:



**Կարիճ**  
Պաշտօնի բարձրացում մը ինքնավստահութիւն մը պիտի ներշնչէ ձեզի: Հանդարտութեամբ եւ համբերատարութեամբ վարուեցէ՛ք ձեր գործընկերներուն հետ: Աւելի հասկացողութիւն ցուցաբերեցէ՛ք անոնց հանդէպ:



**Աղեղնաւոր**  
Հանգիստ ու խաղաղ մթնոլորտի մը կարիքը ունիք: Վատ գաղափարները մէկդի դրէ՛ք եւ քաջաբար դիմագրաւեցէ՛ք ձեր դժուարութիւնները:



**Այծեղջիւր**  
Մեծ յաջողութիւն մը պիտի ունենաք եւ բոլորին զարմանքին արժանանաք: Հաստատակամ քայլերով բարձունքներ պիտի նուաճէք: Գովելի էք:



**Ջրհոս**  
Ձնչին հարցերով մի՛ մտահոգուիք: Նիւթական գետնի վրայ բարելաւում մը կը սպասուի ձեզի: Խանվաղառուեցէ՛ք:



**Ձուկ**  
Չափազանց թերացած էք ձեր տան գործերուն մէջ: Աւելի եռանդով աշխատեցէ՛ք: Ժամանակը ոսկի է: Մի՛ վատնէք զայն:



## ՀՅՐ ԴԵՐԸ ՄԱՆՈՒԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Սրօլօց.am-ի ներկայացուցած մէկ ուսումնասիրութեան համաձայն, կենսքի առաջին տարին, ինչ որ դերը շատ կարեւոր է մանուկի ֆիզիքական զարգացման եւ հիմնական հմտութիւններու ձեւաւորման մէջ: Որպէս կանոն, ինչ որ է մանուկը խաղերը կը տարբերին մանուկը զուարճացնելու մօր հնարքներէն: Հայրերը աւելի հակում ունին ֆիզիքական աշխույժ խաղերու: Անոնք չեն վախարար մանուկներու իյնալէն, կը սորվեցնեն լողալ, կը նստեցնեն իրենց ուսերուն եւ այլն: Այս բոլորը կը խթանեն մանուկին ֆիզիքական աշխուժութիւնը:

Հայրը կրնայ նաեւ մեծ ներդրում ունենալ մանուկի մտածողութեան զարգացման մէջ: Կարծիք կայ, որ հայրերը կրնան իրենց մանուկներուն սորվեցնել աւելի արագ եւ աւելի ճիշդ խօսիլ, քան մայրերն ու մեծմայրերը, որովհետեւ հայրերը, ի



տարբերութիւն մայրերուն, չեն աղաւաղեր բառերը: Որպէս կանոն, տղամարդիկ աւելի լաւ կը սորվեցնեն մանուկներուն մտածողութեան առընչուող տարբեր խաղեր: Հօր հետ շփումը կ'ընդլայնէ մանուկին մտածողութիւնը, կը նպաստէ հետաքրքրութիւններու բազմազանութեան:

Հօր կերպարը կարեւոր է մայր-երեխայ կառուցողական յարաբերութիւններու հաստատման համար նաեւ: Երեխայի զարգացման որոշակի փուլին, ներդաշնակ յարաբերութիւններ ունեցող ընտանիքին մէջ (սովորաբար մէկ տարի անց), հայրը կ'օգնէ մանուկին «առանց ցնցումներու

առանձնանալ» մօրմէն եւ հեռաւորութիւն պահել անկէ, անկախանալ: Որոշ հոգեբաններ նոյնիսկ հայրերուն կը թելադրեն մասնակցիլ մանուկին



համար կարեւոր համարուող առիթներուն, ինչպէս՝ «առանձին ննջարան տեղափոխուիլը» կամ մանկապարտէզ յաճախելը: Մէկ խօսքով, հայրը մանուկին «ուղեցոյց» է դէպի արտաքին աշխարհ, որուն շնորհիւ մանուկը ինքզինք աւելի ապահով կը զգայ:

Հայրը մանուկին կը սորվեցնէ հմտութեամբ ընկալել ընկերային տարբեր երեւոյթներ, կը բացատրէ, թէ ի՞նչ կը նշանակէ հեղինակութիւն եւ այլն: Ի տարբերութիւն մօր, որ կը սիրէ մանուկը պարզապէս այն պատճառով, որ ան իր զաւակն է, հայրը սովորաբար մանուկէն կ'ունենայ ակընկալութիւններ, զորս ան պետք է կատարէ:

Կարեւոր է նաեւ ինչ որ դերը մանուկի սեռական ինքնահաստատման մէջ: Տղաները, նայելով իրենց հօր, կը ստեղծեն վարքի որոշ ձեւ մը, որուն կը սկսին հետեւիլ հետագային: Աղջիկները ինչ որ գուրգուրանքը տեսնելով կ'ըմբռնեն, որ իրենք նուրբ սեռի ներկայացուցիչ են ու ինչ որ թիկունքը իրենց պաշտպան է միշտ:

Հետեւաբար հայրը մանուկին կու տայ այն, ինչ որ մայրը չի կրնար տալ: Այլ խօսքով՝ ծնողները տարբեր են՝ մէկը միւսը լրացնող:


### Բանաստեղծական անկիւն

## ԳԵՂՈՍ ՍՕՍԵԱՅ ԱՆՏԱՌԻՆ

Վահան Թեքեան

Հայոց երկրին մէջ միշտ կ'ապրին  
Մեծ սօսիներն արմենաւանդ...  
Եւ լըռութեանն ու ըստուերին  
Մէջտեղ անոնց՝ անարգաւանդ.  
Օրէ մը ետք քերթողն երբ խանդ,  
Ու ներշնչում խնդրել կու գայ,  
Խըռովայոյ՞ ճիւղերն աստ անդ,  
Կը փսփիսան «Դո՛ւն ես, արքայ՛...»

Կ'անցնին, կ'անցնին օրն ու տարին  
Հալածական... Դաշտ, դարաւանդ,  
Եւ լեռներուն ալ կատարին  
Ձիւնը մաքուր գերդ աղամանդ.  
Կը կըրեն հետքն անոնց հիւանդ  
Ծանրը քայլին... Մինչ հոս հսկայ  
Ծառերն, յոյսով միշտ անվկանդ՝  
Կը փսփիսան, «Դո՛ւն ես, արքայ՛...»



Սեւ աղետի մը նախօրին՝  
Անտառն յուզուած է մանաւանդ,  
Եւ տխրութեամբ սօսիք կ'օրրին...  
Օ՛հ, թշնամույն ըստուեր՛ր ժանդ.  
Տուներն, գիւղերը քարուքանդ...  
–Բայց մինչ թաւուտը կը սրգայ,  
Վհա ձայներ անհընձազանդ  
Կը փսփիսան «Դո՛ւն ես, արքայ՛...»



Ռաֆֆի Սիկահեան

## ՏԵՂԱԿԱՆ

### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-Համաշխարհային 2026-ի ախոյեանութեան գտման առաջին հանդիպումին, Սուրիոյ հաւաքականը Սեուտական Արաբիոյ մէջ յաջողեցաւ 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնել հիւսիսային Քորիայի հաւաքականը: Հանդիպումի միակ կողմը 37-րդ վայրկեանին նշանակեց հաւաքականի խմբապետ Օմար Սոման:



-Արեւմտեան Ասիոյ աղջկանց ֆութպոլի աւարտական մրցումին, Սուրիոյ աղջկանց պատանեկան հաւաքականը 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Յորդանանը եւ կրցաւ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով տիրանալ ախոյեանութեան: Առաջին փուլին, Սուրիոյ կազմը Լիբանանին հետ կատարած հանդիպումին արձանագրեց հաւասարութիւն մը, ինչպէս նաեւ 4 - 0 արդիւնքով յաղթեց Իրաքին:



-Համաշխարհային Սուրիոյ պասքէթի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանական երկրորդ փուլի մրցումներուն, ՀՍՀՄ-ի կազմը հիւրընկալեց Դամասկոսի Ռահտէն: Հանդիպումին ընթացքին զոյգ կազմերը փոխին ի փոխ տիրապետեցին արդիւնքին: ՀՍՀՄ-ի կազմը որոշ ժամանակով մը կրցաւ կէտերու տարբերութիւնը բարձրացնել 11-ի, բայց վերջին վայրկեաններուն որոշ սխալներու հետեւանքով կազմը կրեց իր երկրորդ պարտութիւնը: Մրցումին, ՀՍՀՄ-ի կազմի լաւագոյն խաղացող Լիլիթ Սարգիսեանն էր, որ նշանակեց 8 կէտ, 8 rebound, եւ 8 Block:

-ՀՍՀՄ-ի պասքէթի տղոց խումբ վերադարձաւ կազմի նախկին խաղացող Սեպուհ Խարաճեան, որ վերջին տարիներուն մաս կազմած էր Հալէպի Ահլի եւ Ճալաա խումբերուն, ինչպէս նաեւ հերթական երկրորդ տարին ըլլալով Պետիկ Մահսերեճեան մաս պիտի կազմէ ՀՍՀՄ-ի խումբին:

- Հալէպի մէջ, Սուրիոյ պասքէթի տղոց ախոյեանական մրցումներուն, Ահլին կրեց այս տարեշրջանի իր երկրորդ պարտութիւնը, 74 - 71 արդիւնքով պարտութեան մատնուելով Ճալաաէն, իսկ Հոմսի մէջ Քարամէն 68 - 71 արդիւնքով գիշեցաւ Նաուահիին: Դամասկոսի զոյգ խումբերու՝ Ճէշի եւ Ռահտէի միջեւ կայացած հանդիպումը աւարտեցաւ ի նպաստ Ռահտէին՝ 79 - 65 արդիւնքով:

### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 465)

Պատրաստեց՝ Մարինա Զիւլֆուջեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1									■			
2							■					■
3							■					
4				■				■				
5		■			■					■		
6	■					■					■	
7												■
8		■				■						
9			■								■	
10				■			■					■
11		■				■			■			
12							■				■	

### Հորիզոնական

- 1- Գերագոյն հրամանատար: Խոշոր կապոց:
  - 2- Հարկաւոր: Միտք:
  - 3- Հրաքիսային քառագագաթ լեռ՝ հայկական լեռնաշխարհին մէջ: Սերմ:
  - 4- Բաղաձայն տառեր: Այն վայրը, ուր Յիսուս իր առաջին հրաշքը կատարեց: Միջազգային կազմակերպութիւն մը:
  - 5- Տառի մը անունը: Վահան Փափագեանի ծածկանունը: Տառի մը անունը:
  - 6- Տառի մը հարեանները: Տարածքի միաւոր:
  - 7- Խոհեմութիւն, ուշիմութիւն:
  - 8- Ջերմ: Ժխտական նախածանց: Տառի մը անունը:
  - 9- Տառի մը հարեանները: Հրաշք երկաթով այրել:
  - 10- Ձեռքերու եւ ոտքերու շարժուն ծայրամաս: Իրերայաջորդ տառեր:
- Խորք:
- 11- Հաստատական պատասխան: Անձնական դերանուն: Հնարք:
  - 12- Յակոբ Մեծուրիի երկերէն «..... Լոյս»: Ոլորուած հիւսք:

### Ուղղահայեաց

- 1- Ջարդ: Հօրեղբոր կամ մօրեղբոր, հօրաքրոջ կամ մօրաքրոջ որդի:
- 2- Սեղմ: 7001:
- 3- Աշխատութեան մը նախանիւթերը: Հակառակ՝ լեզուով մը «այո»: Տօթ:
- 4- Հակառակ՝ ողբար: Մտիկ ընել: Գրաբար՝ ո՛ր:
- 5- Ս. Գրիգոր Լուսաւորիչի հայրը: Մարմինի անդամներէն: Ջրիտեղէն փրկուած նահապետ:
- 6- Իշամեղու: 4500:
- 7- Տառի մը հարեանները:
- 8- Քիմքի տպաւորութիւն: Մաշկ, պարուտակ:
- 9- Հակառակ՝ քէն: Պարտաւորել:
- 10- Անեփ: Երեսի վրայ ձգել:
- 11- Պատկառանք:
- 12- Անգոր: Պոչ:

### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 464)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Կ	Խ	Ա	Յ	Ր	Ս	Օ	Ն	Պ	Պ	Ի	Ն
2	Ք	Ա	Մ	Ի	Ն	Ե	Ր	Ա	Ր	Մ		
3	Ճ	Ի	Չ		Կ	Ր	Ա	Կ	Ա	Ա		
4	Վ	Ի	Ճ	Ա	Կ		Մ	Կ	Ն	Ն		
5	Ա	Լ	Ն	Ա			Ա	Ն	Լ	Ա		
6	Ր	Խ	Ա	Ր	Ս	Ս	Ի	Լ	Ա	Կ		
7	Ա	Ե	Ր		Ս	Ր	Ն	Ե	Լ			
8	Գ						Ր	Գ	Ա	Ն		
9	Ա	Ա	Ա	Ր	Է	Գ		Ն	Ա	Ա		
10	Յ	Ի	Յ	Ր	Ա	Ճ	Ն	Լ	Ն			
11		Ն	Ն	Ն	Յ	Ր	Ն	Ա	Մ			
12	Ա	Պ	Ե	Ր	Ա	Ն	Ր		Լ	Ի		

ԼՈՒՐԵՐ

<b>ԵՐԿՐԵՐԵՐԻ</b> <b>27/11</b>  8° 17°	<b>ԵՐԵՐԵՐԵՐԻ</b> <b>28/11</b>  7° 15°	<b>ՉՈՐԵՐԵՐԵՐԻ</b> <b>29/11</b>  7° 15°	<b>ՀԻՆՃԵՐԵՐԻ</b> <b>30/11</b>  7° 15°	<b>ՈՐԲԱՐ</b> <b>1/12</b>  11° 16°	<b>ՇԱԲԱՐ</b> <b>2/12</b>  9° 17°	<b>ԿԻՐԱԿԻ</b> <b>3/12</b>  8° 18°
--	--	---	--	--	---	--

